

Ազդագիր (առևտրի ազդագիր)

ՏԻՏՎՈՍԱԹԵՐԹ

«ՇԵՆ – ԿՈՆՑԵՆՆ» Փակ Բաժնետիրական Ընկերություն

թողարկողի ֆիրմային անվանումը (անուն, ազգանունը)

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

կազմակերպական - իրավական ձևը

0043, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Շիրակի 2/2, հեռ. (37410) 46-01-01,

էլ. փոստ՝ shen@shenconcern.com, ինտ. կայքը՝ www.shenconcern.com

գտնվելու վայրը, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն)

արժեթղթերի դասը՝	<u>անվանական, արժեկտրոնային պարտատու</u>
արժեթղթերի ձևը՝	<u>Ոչ փաստաթղթային</u>
արժեթղթերի քանակը՝	<u>60 000 հատ</u>
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	<u>10 000 (տասը հազար) ՀՀ դրամ</u>
արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝	<u>600 000 000 (վեց հարյուր միլիոն) ՀՀ դրամ</u>

«ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ ՊԱՏԱՍԵԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿՐՈՒՄ ՍՈՒՅՆ ԱԶԳԱԳՐՈՒՄ ԶԵՏԵՂՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՍԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՃՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ: ԳՐԱՆՑՄԱՆ ՓԱՍՏԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԳՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ»:

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի ամբողջականությունը»:

ստորագրող անձինք՝

<u>Սամվել Բեգլարյան</u> (անուն, ազգանուն)	<u>խորհրդի նախագահ</u> (պաշտոն)	<u>(ստորագրություն)</u>	<u>(ամսաթիվ)</u>
<u>Արա Հասրաթյան</u> (անուն, ազգանուն)	<u>խորհրդի անդամ</u> (պաշտոն)	<u>(ստորագրություն)</u>	<u>(ամսաթիվ)</u>
<u>Իրինա Դավթյան</u> (անուն, ազգանուն)	<u>խորհրդի անդամ</u> (պաշտոն)	<u>(ստորագրություն)</u>	<u>(ամսաթիվ)</u>
<u>Պապ Բադալյան</u> (անուն, ազգանուն)	<u>գործադիր տնօրեն</u> (պաշտոն)	<u>(ստորագրություն)</u>	<u>(ամսաթիվ)</u>
<u>Արմեն Բալասանյան</u> (անուն, ազգանուն)	<u>ֆինանսական տնօրեն</u> (պաշտոն)	<u>(ստորագրություն)</u>	<u>(ամսաթիվ)</u>

Ստորագրությունները վավերացնում են (ստորագրությունները վավերացվում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի, կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)՝

<u>Պապ Բադալյան</u> (անուն, ազգանուն)	<u>գործադիր տնօրեն</u> (պաշտոն)	<u>(ստորագրություն)</u>	<u>(ամսաթիվ)</u>
--	------------------------------------	-------------------------	------------------

Ազդագրում ներառվող տեղեկությունների ցանկը՝ **տես էջ 2:**

Կ.Տ.

Ազդագրում ներառված են հետևյալ տեղեկությունները՝

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ.....	3
ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՍՄԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	6
Ընդհանուր տեղեկություններ.....	6
Պարտատոմսերի գնի վերաբերյալ տեղեկություններ.....	6
Պարտատոմսերից ստացվող եկամուտների վերաբերյալ տեղեկություններ.....	7
Սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ.....	7
Տեղեկություններ պարտատոմսերի տեղաբաշխմանը մասնակցող անձանց և նրանց մասնակցության չափի վերաբերյալ	7
Բաժանորդագրությունների վերաբերյալ տեղեկություններ	8
Տեղաբաշխվող պարտատոմսերից ստացվող սեփականատերերի եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը	8
Պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքները և պարտականությունները.....	9
Պարտատոմսերի երկրորդային շուկայում մարքեթ-մեյքերի մասին տեղեկություններ.....	9
Պարտատոմսերի հաշվառմամբ զբաղվող կազմակերպություններ.....	10
Թողարկման նպատակը.....	10
ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	11
Ընդհանուր տեղեկություններ.....	11
1. Թողարկողի պատմությունը և զարգացումը	11
2. Ֆինանսական և այլ խմբերի վերաբերյալ տեղեկություններ	11
3. Թողարկողի առաջին իրականացնող անձինք	11
4. Փորձագետների մասնագիտական կարծիքը և այլ անձանցից ստացված տեղեկությունները	11
5. Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների երաշխավորողի վերաբերյալ տեղեկություններ.....	11
6. Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի չափը.....	12
7. Թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի նկատմամբ առկա օպցիոնների վերաբերյալ տեղեկություններ.....	12
Թողարկողի գործունեության վերաբերյալ տեղեկություններ.....	12
1. Ուսկային գործոններ.....	12
2. Թողարկողի հիմնական գործունեության նկարագիրը.....	13
3. Թողարկողի հիմնական և ոչ հիմնական գործունեության մեջ ներգրավված գույքը	15
4. Այն անձանց անվանացանկը, որտեղ թողարկողը, ներառյալ՝ նրա դուստր ընկերությունները, բաժնային արժեթղթերի նշանակալից կամ խոշոր սեփականատեր են.....	16
5. Հարկային արտոնությունները.....	16
6. Դատական և իրավական ընթացակարգը.....	17
7. Փոխկապակցված գործարքների վերաբերյալ տեղեկություններ.....	17
Թողարկողի ֆինանսական վիճակը և գործունեության արդյունքները	19
1. Ֆինանսական հաշվետվություններ	19
2. Ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների փոփոխությունների վերաբերյալ տեղեկություններ.....	19
3. Ընկերության ֆինանսական գործունեությունը	20
Թողարկողի կառավարման մարմինները և կառավարմանը մասնակցող անձինք	22
Թողարկողի հետ փոխկապակցված անձինք, թողարկողի սեփականատերերը	26
1. Թողարկողի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկություններ.....	26
2. Թողարկողի նշանակալից, բայց ոչ խոշոր սեփականատերերի վերաբերյալ	26
Թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ	27

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Սույն ամփոփաթեթը դիտվում է որպես ազդագրի ներածական համառոտ նկարագրություն:

Ընկերության թողարկված պարտատոմսերը անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային, ինվեստիցիոն /ներդրումային/ պարտատոմսեր են՝ 600.000.000 (վեց հարյուր միլիոն) ՀՀ դրամ ընհանուր անվանական ծավալով, (60.000 հատ, յուրաքանչյուրի անվանական արժեքը 10.000 ՀՀ դրամ): Տեղաբաշխվող արժեթղթերի քանակը կազմում է 60.000 հատ:

Պրատատոմսերի դիմաց վճարումները ընդունվելու են միայն անկանխիկ ձևով: Գնորդը Ընկերության համար «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում բացված **1570003715240100** հաշվի համարին միանվագ պետք է փոխանցի իր կողմից գնվող պարտատոմսերի համար անհրաժեշտ գումարը:
Պարտատոմսերի դիմաց ոչ դրամական ձևով վճարում նախատեսված չէ:

Պարտատոմսի մարման օրը տեղաբաշխման սկզբից հաշված 36-րդ ամսվա համապատասխան օրն է:

Մեկ պարտատոմսի տեղաբաշխման գինը որոշվում է համաձայն հետևյալ բանաձևի՝

$$P = \frac{N}{\left(1 + R \times \frac{t}{365}\right)} \times \left\{ c \times \frac{m}{365} \times \sum_j^n \frac{1}{\left(1 + R \times \frac{m}{365}\right)^{j-1}} + \frac{1}{\left(1 + R \times \frac{m}{365}\right)^{n-1}} \right\}$$

որտեղ.

P – Պարտատոմսի գինն է,

N – Պարտատոմսի անվանական արժեքն է

R – Պարտատոմսի դիմաց վճարվող տարեկան տոկոսադրույքի բացարձակ արժեքն է

m – Կիսամյակի օրերի քանակն է,

t – Մինչև տվյալ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակն է,

c – տարեկան վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքն է, որը հավասար է 11%-ի,

n - արժեկտրոնի վճարումների քանակն է, որը հավասար է 6-ի,

j – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոխվում է կախված տվյալ պահից մինչև վերջնական մարումը մնացած արժեկտրոնների վճարումների քանակից, և կարող է ընդունել 1-ից 6 արժեքները:

Պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը հաշվարկում է կիսամյակային պարբերականությամբ՝ տեղաբաշխման սկսման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ, 24-րդ, 30-րդ, և 36-րդ ամսվա համապատասխան օրերին: Արժեկտրոնի գումարը Ընկերությունը վճարում է պարտատոմսերի սեփականատերերին՝ արժեկտրոնի հաշվարկման օրից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

1. Ընկերությունը պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը հաշվարկում է հետևյալ բանաձևով:

$$A = \frac{N \times c}{100} \times \frac{m}{365}$$

որտեղ՝

A – յուրաքանչյուր կիսամյակ վճարվող արժեկտրոնի չափն է,

N – պարտատոմսի անվանական արժեքն է,

c – տարեկան վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքն է (11%),

m – կիսամյակի օրերի քանակն է:

Պարտատոմսերի տարեկան վճարվող արժեկտրոնի տոկոսադրույքը (c) 11% է:

Որպես Ընկերության պարտատոմսերի տեղաբաշխող հանդես կգա «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերությունը (Ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա ՆԸ թիվ 6)՝ հասցեն ՀՀ, ք. Երևան 0002, Ամիրյան 27 գրասենյակ 14, հեռ (37410) 50-15-26, 50-15-27, email՝ mail@capital.com.am, ինտերնետային էջը՝ www.capital.com.am:

Տեղաբաշխողը գործադրելու է լավագույն ջանքեր (best efforts) պարտատոմսերը ներդրողներին տեղաբաշխելու համար:

Անձը, որը նպատակ ունի ձեռք բերել Պարտատոմսեր, առձեռն տեղաբաշխողին է ներկայացնում Գնման Հայտ, որը պետք է բովանդակի՝

- իր անունը և ազգանունը, անձնագրային տվյալները, բնակության վայրը, ստորագրությունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը, իրավասու /լիազորված/ անձի ստորագրությունը)։
- ձեռք բերվող պարտատոմսերի քանակը։
- Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայում կամ որևէ լիցենզավորված պահառուի մոտ բացված անձնական հաշվի համարը։
- հավաստիացում այն մասին, որ ազդագիրը նրան է տրամադրվել Գնման Հայտը ստորագրելու պահից առնվազն 24 ժամ առաջ։

Գնման Հայտին պետք է կցվի նաև պարտատոմսերի դիմաց վճարման մասին փաստաթուղթը։

Ընկերության պարտատոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման ըստ հետևյալ հարկատեսակների՝

1. Շահութահարկ
2. Եկամտահարկ

Պարտատոմսերի պահպանումն ու հաշվառումն իրականացվելու է Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա ԲԲԸ-ում՝ ըստ համապատասխան կարգի։

Պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտականությունների հաշվառումը իրականացնելու է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ն. հասցեն՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Մեծ Մկրտչյան 5ք, հեռ. (37410) 566-446, 520-978:

Ընկերության կողմից պարտատոմսերի թողարկմամբ և տեղաբաշխմամբ ստացված միջոցները ամբողջովին ուղղվելու են շրջանառու միջոցների համալրմանը։

Ընկերության ֆիրմային լրիվ անվանումն է՝

«Շեն-Կոնցեռն» փակ բաժնետիրական ընկերություն
Закрывое акционерное общество «Шен-Концерн»
Closed Joint Stock Company «Shen-Concern»

Ընկերության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Շիրակի 2/2:

Ընկերությունը ներկայումս զբաղվում է շինանյութերի (ներկերի, չոր շաղախների (մածիկների և կապակցող նյութերի), բետոնե բլոկների արտադրությամբ, շինարարական աշխատանքների իրականացմամբ, և շինարարական ապրանքների առևտրով: Ընկերության իրականացրած բազմատեսակ գործունեությունը հիմնականում առնչվում է շինարարության ոլորտին: Այնուհանդերձ Ընկերության համար առավել կարևոր գործունեության ոլորտներից կարելի առանձնացնել շինարարությունում ներքին և արտաքին հարդարման համար օգտագործվող նյութերի և բետոնե իրերի արտադրությունը: Մինչ այժմ Ընկերությունը իր արտադրանքը գրեթե սպառել է միայն տեղական շուկայում:

Ընկերությունը իրականացնում է նաև վարագույրների ներկրում և վաճառք, որը լինելով նոր, դեռևս իրացման մեծ ծավալներ չունի:


Ընթացիկ ակտիվների իրացվելության գործակիցը 31.12.2004թ. կազմել է **1.64**, 31.12.2005թ.՝ **2.60**, 31.12.2006թ.՝ **5.08**, 31.12.2007թ.՝ **2.32**, 30.06.2008թ.՝ **2.04** :

Ընկերության իրացվելի ակտիվները սեփական են:

Ակտիվների եկամտաբերությունը տոկոսներով ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

	31.12.2005թ.	31.12.2006թ.	31.12.2007թ.	30.06.2008թ.
Ակտիվների եկամտաբերությունը	1,16%	10,54%	8,23%	2,20%

Ընկերության 2005-2007թթ և 2008 թվականի երկրորդ եռամսյակի համախառն շահույթը և գուտ շահույթը՝ շահութահարկի գծով ծախսի նվազեցումներից հետո, ներկայացված են հետևյալ գրաֆիկում (հազ.դրամներով), որոնք հնարավորություն կտան համառոտ պատկերացում կազմել Ընկերության գործունեության արդյունքների մասին:



Ընկերության կառավարման մարմիններն են՝

- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը,
- Ընկերության խորհուրդը
- Ընկերության գործադիր տնօրենը
- Ընկերության վերստուգողը:

Ընկերության կառավարման մասնակցող անձինք են՝ Բեգլարյան Սամվել՝ տնօրենների խորհրդի նախագահ, Հասրաթյան Արա՝ տնօրենների խորհրդի նախագահի տեղակալ, Իրինա Դավթյան՝ տնօրենների խորհրդի անդամ, Հայրապետյան Լիանա՝ վերստուգող, Բադալյան Պապ՝ գործադիր տնօրեն, Բալասանյան Արմեն՝ ֆինանսական տնօրեն-գլխավոր հաշվապահ:

Թողարկողի հետ փողկապակցված անձինք են՝ Սամվել Բեգլարյանը (տիրապետում է Ընկերության թողարկած 107813 հատ հասարակ անվանական բաժնետոմսի՝ 71.888%) և Արա Հասրաթյանը (տիրապետում է Ընկերության թողարկած 47971 հատ հասարակ անվանական բաժնետոմսի՝ 27.98%):

Ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական անձ են հանդիսանում «Շեն Ջեոքցիա» ՍՊԸ-ն, որի 35% բաժնեմասը պատկանում է «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ին:

Ընկերությունը այժմ ունի թողարկած և շրջանառության մեջ գտնվող 150000 հատ սովորական, անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմս, յուրաքանչյուրը 10000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Ընկերությունը նախկինում թողարկել է նաև 16000 հատ անվանական, զեղչատուկոսային, ոչ փաստաթղթային պարտատոմսեր 10000 ՀՀ դրամ անվանական արժեքով, որոնք տեղաբաշխվել են երեք տրանշներով և որոնց մարումները տեղի է ունեցել համապատասխանաբար 26.12.2007թ.-ին, 25.04.2008թ.-ին և 02.09.2008թ.-ին: Ընկերությունը 1999 թվականին թողարկել է նաև փոխարկելի պարտատոմսեր, որոնք փոխարկվել են հասարակ անվանական բաժնետոմսերի նույն թվականին: Ընկերության թողարկած արժեթղթերի վերաբերյալ մանրամասն տեղեկությունները նույնպես ներկայացված են սույն ազդագրում:

Ներդրողը առաջարկվող պարտատոմսերում ներդրում անելու որոշումը կայացնելիս պետք է ընթերցի ամբողջ ազդագիրը:

Ամփոփաբերքը կազմվել է Ընկերության ֆինանսական տնօրեն - գլխավոր հաշվապահի կողմից: Ամփոփաբերքի կազմման համար պատասխանատու անձը պատասխանատվություն է կրում ամփոփաբերքում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) միայն այն դեպքում, եթե այն ոչ ճշգրիտ, անհամատեղելի է ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Պարտատոմսերի ազդագիրը և կից ներկայացվող փաստաթղթեր ներդրողը կարող է ստանալ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ից, (ՀՀ, ք. Երևան 0002, Ամիրյան փողոց 27, գրասենյակ 14, հեռ.54-15-27), ինչպես նաև «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի ինտերնետային էջից՝ www.shenconcern.com, կամ Տեղաբաշխողի ինտեռնետային էջից՝ www.capital.com.am:

ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր տեղեկություններ

ա. Ընկերության թողարկված պարտատոմսերը անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային, ինվեստիցիոն /ներդրումային/ պարտատոմսեր են:

բ. Ընկերության թողարկված պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմում է 600.000.000 (վեց հարյուր միլիոն) ՀՀ դրամ (60.000 հատ, յուրաքանչյուրի անվանական արժեքը 10.000 ՀՀ դրամ): Տեղաբաշխվող արժեթղթերի քանակը կազմում է 60.000 հատ՝ 600.000.000 (վեց հարյուր միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով:

գ. Մեկ պարտատոմսի անվանական արժեքը 10.000 (տասը հազար) ՀՀ դրամ է:

դ. Պարտատոմսերը փոխարկելի չեն:

ե. Պարտատոմսերի տեղաբաշխումն սկսվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից ազդագրի գրանցումից տասնաշխատանքային օր հետո: Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտը համարվում է տեղաբաշխման սկզբից 60-րդ օրը ներառյալ: Եթե տվյալ օրը հանդիսանում է ոչ աշխատանքային, ապա տեղաբաշխման ավարտը համարվում է այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Տեղաբաշխման ընթացքում, մինչև վաթսուներորդ օրը բոլոր պարտատոմսերի տեղաբաշխման դեպքում, տեղաբաշխման ավարտը համարվում է վերջին պարտատոմսի իրացման օրը:

զ. Տեղաբաշխումը հետաձգելու կամ չեղյալ հայտարարելու համար թողարկողը որևէ հանգամանք չի նախատեսում, սակայն պարտատոմսերի առաջարկի և տեղաբաշխման հետաձգման կամ չեղյալ ճանաչման հանգամանքներ կարող են հանդիսանալ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 20 և 21 հոդվածներով սահմանված հիմքերի առկայությունը:

Ընկերությունը պարտավորվում է տեղաբաշխումը կասեցնելու և շարունակելու, տեղաբաշխումը դադարեցնելու և դրա ընթացքում ստացված միջոցները վերադարձնելու մասին տեղեկատվությունը հրապարակել իր ինտերնետային էջում՝ www.shenconcern.com

է. Պարտատոմսերի դիմաց վճարումները ընդունվելու են միայն անկանխիկ ձևով: Գնորդը Ընկերության համար «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում բացված **1570003715240100** հաշվի համարին միանվագ պետք է փոխանցի իր կողմից գնվող պարտատոմսերի համար անհրաժեշտ գումարը:

Պարտատոմսերի դիմաց ոչ դրամական ձևով վճարում նախատեսված չէ:

ը. Պարտատոմսի մարման օրը տեղաբաշխման սկզբից հաշված 36-րդ ամսվա համապատասխան օրն է: Ընկերությունը մարման օրվան նախորդող օրվա ժամը 18.00-ի դրությամբ Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայից վերցնում է պարտատոմսերի սեփականատերերի ռեստորից քաղվածք, որի հիման վրա պարտատոմսերի սեփականատերերի բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով վճարում է համապատասխան գումարներ (պարտատոմսերի անվանական արժեքը): Միաժամանակ Ընկերությունը հանձնարարական է տալիս Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիային՝ պարտատոմսերի սեփականատերերի ռեստորից տրված քաղվածքում նշված քանակության պարտատոմսերը մարելու համար: Պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

թ. Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ նախատեսված չեն, քանի որ վերջիններս առանց ապահովման են:

ժ. Պարտատոմսի թողարկման և տեղաբաշխման մասին որոշումը ընդունվել է 2008 թ. սեպտեմբերի 8-ին Ընկերության բաժնետերերի ժողովի կողմից:

Պարտատոմսերի գնի վերաբերյալ տեղեկություններ

Մեկ պարտատոմսի տեղաբաշխման գինը որոշվում է համաձայն հետևյալ բանաձևի՝

$$P = \frac{N}{\left(1 + R \times \frac{t}{365}\right)} \times \left\{ c \times \frac{m}{365} \times \sum_j^n \frac{1}{\left(1 + R \times \frac{m}{365}\right)^{j-1}} + \frac{1}{\left(1 + R \times \frac{m}{365}\right)^{n-1}} \right\}$$

որտեղ.

- P – Պարտատոմսի գինն է,
- N – Պարտատոմսի անվանական արժեքն է
- R – Պարտատոմսի դիմաց վճարվող տարեկան տոկոսադրույքի բացարձակ արժեքն է
- m – Կիսամյակի օրերի քանակն է,
- t – Սինչև տվյալ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակն է,
- c – տարեկան վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքն է, որը հավասար է 11%-ի,
- n - արժեկտրոնի վճարումների քանակն է, որը հավասար է 6-ի,
- j – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոխվում է կախված տվյալ պահից մինչև վերջնական մարումը մնացած արժեկտրոնների վճարումների քանակից, և կարող է ընդունել 1-ից 6 արժեքները:

Ընկերության պարտատոմսերի գինը (գումարայի արտահայտությամբ) տեղաբաշխման առաջին օրվանից ողջ տեղաբաշխման ընթացքում կհարպարակվի Ընկերության ինտերնետային կայքում (www.shenconcern.com):

Պարտատոմսերից ստացվող եկամուտների վերաբերյալ տեղեկություններ

Պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը հաշվարկում է կիսամյակային պարբերականությամբ՝ տեղաբաշխման սկսման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ, 24-րդ, 30-րդ, և 36-րդ ամսվա համապատասխան օրերին: Արժեկտրոնի գումարը Ընկերությունը վճարում է պարտատոմսերի սեփականատերերին՝ արժեկտրոնի հաշվարկման օրից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

2. Ընկերությունը պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը հաշվարկում է հետևյալ բանաձևով:

$$A = \frac{N \times c}{100} \times \frac{m}{365}$$

որտեղ՝

- A – յուրաքանչյուր կիսամյակ վճարվող արժեկտրոնի չափն է,
- N – պարտատոմսի անվանական արժեքն է,
- c – տարեկան վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքն է (11%),
- m – կիսամյակի օրերի քանակն է:

Պարտատոմսերի տարեկան վճարվող արժեկտրոնի տոկոսադրույքը (c) 11% է:

Ընկերությունը արժեկտրոնների հաշվարման օրվան նախորդող օրվա ժամը 18.00-ի դրությամբ Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայից վերցնում է պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածք, որի հիման վրա պարտատոմսերի սեփականատերերին բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով, վճարում է համապատասխան գումարներ:

Ոչ ռեզիդենտ անձանց համար վճարումների առանձնահատկություններ սահմանված չեն:

Սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ

ա. Պարտատոմսերի նկատմամբ որևէ սահմանափակում թողարկողի կանոնադրությամբ կամ պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանված չէ:

Միակ սահմանափակումը ներկայումս կարելի համարել այն, որ պարտատոմսերը Ֆոնդային Բորսայում ցուցակվելուց հետո, պետք է շրջանառվեն միայն Ֆոնդային Բորսայում, համաձայն «Արժեթղթերի Շուկայի մասին» ՀՀ օրենքի 129-րդ հոդվածի և ՀՀ կենտրոնական բանկի 16.04.2008թ. քիվ 125-Ն որոշման:

բ. Բաժանորդագրությունների նվազագույն և առավելագույն մեծությունը սահմանված չէ:

Տեղեկություններ պարտատոմսերի տեղաբաշխմանը մասնակցող անձանց և նրանց մասնակցության չափի վերաբերյալ

Որպես Ընկերության պարտատոմսերի տեղաբաշխող հանդես կգա «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերությունը (Ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա ՆԸ թիվ 6)՝ հասցեն ՀՀ, ք. Երևան 0002, Ամիրյան 27 գրասենյակ 14, հեռ (37410) 50-15-26, 50-15-27, email՝ mail@capital.com.am, ինտերնետային էջը՝ www.capital.com.am, որը գործում է պայմանագրի հիման վրա: Տեղաբաշխողի վարձատրության չափը կազմում է տեղաբաշխողի կողմից ուղղակիորեն տեղաբաշխված պարտատոմսերի անվանական արժեքի 0.3%-ը: Տեղաբաշխողի կողմից առաջարկվող պարտատոմսերի քանակը 60.000 հատ է, իսկ գինը որոշվում է վերևում բերված բանաձևի միջոցով:

Տեղաբաշխողը իր անունից, որպես բրոքեր, կնքում է պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման գործարքներ՝ գնորդներից /ներդրողներից/ տեղաբաշխման կարգով սահմանված Գնման Հայտեր ընդունելով և համապատասխան հանձնարարագրեր Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիային ներկայացնելով:

Տեղաբաշխողը գործադրելու է լավագույն ջանքեր (best efforts) պարտատոմսերը ներդրողներին տեղաբաշխելու համար:

Բաժանորդագրությունների վերաբերյալ տեղեկություններ

Անձը, որը նպատակ ունի ձեռք բերել Պարտատոմսեր, առձեռն տեղաբաշխողին է ներկայացնում Գնման Հայտ, որը պետք է բովանդակի՝

- *իր անունը և ազգանունը, անձնագրային տվյալները, բնակության վայրը, ստորագրությունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը, իրավասու /լիազորված/ անձի ստորագրությունը).*
- *ձեռք բերվող պարտատոմսերի քանակը.*
- *Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայում կամ որևէ լիցենզավորված պահառուի մոտ բացված անձնական հաշվի համարը.*
- *հավաստիացում այն մասին, որ ազդագիրը նրան է տրամադրվել Գնման Հայտը ստորագրելու պահից առնվազն 24 ժամ առաջ:*

Գնման Հայտին պետք է կցվի նաև պարտատոմսերի դիմաց վճարման մասին փաստաթուղթը:

Գնորդի կողմից Գնման Հայտը ներկայացնելուց և համապատասխան գումարը Ընկերության բանկային հաշվին փոխանցելուց հետո, Ընկերությունը կամ տեղաբաշխողը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնարարական է տալիս Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիային համապատասխան քանակությամբ պարտատոմսերը Ընկերության հաշվից գնորդի հաշվին փոխանցելու համար:

Գնման Հայտերը բավարարվում են ըստ ներկայացման ժամկետի հերթականության:

Գնորդների կողմից գնման հայտերը ներկայացնելուց հետո 6 ժամվա ընթացքում դրանք կարող են հետ կանչվել գնորդի կողմից համապատասխան գրությամբ:

Չբավարարված կամ հետ կանչված հայտերի համապատասխան գումարները գնորդները կարող են 2 աշխատանքային օրվա ընթացքում ստանալ Ընկերությունից՝ համապատասխան բանկային հաշվին Ընկերության կողմից փոխանցելու միջոցով: Հետ կանչված հայտերի գումարների վերադարձման դեպքում բանկային փոխանցումների հետ կապված ծախսերը պետք է կատարի գնորդը, որը հետ է կանչել իր կողմից նախապես ներկայացված հայտը:

Տեղաբաշխվող պարտատոմսերից ստացվող սեփականատերերի եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը

Ընկերության պարտատոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման ըստ հետևյալ հարկատեսակների՝

3. Շահութահարկ

4. Եկամտահարկ

Շահութահարկ: Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում Հայաստանի Հանրապետությունում ստեղծված կազմակերպությունները և ոչ ռեզիդենտները (օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները) եւ դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները): Ընդ որում վերջիններիս համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը: Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Շահութահարկի գումարը հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ 20 տոկոս դրույքաչափով: Պարտատոմսերում ներդրում կատարող անձը եկամուտ կարող է ստանալ երկու դեպքում՝

պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսից (գնման գնի և մարման ժամանակ ստացված անվանական արժեքի տարբերությունից) և

մինչև մարումը վաճառքի և գնման գների դրական տարբերությունից (կապիտալի հավելում):

Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար շահութահարկը հաշվարկվում է այլ դրույքաչափով: Այսպես, եթե ոչ ռեզիդենտը հայաստանյան աղբյուրներից ստանում է պասիվ եկամուտներ (տոկոսներ, կապիտալի հավելում և այլն) ապա նրա հարկային գործակալը պարտավոր է գանձել շահութահարկ՝ 10 տոկոս դրույքաչափով:

Եկամտահարկ: Հայաստանի Հանրապետությունում եկամտահարկ են վճարում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ընդ որում ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում: Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է: Պարտատոմսերից ստացված եկամուտները կապիտալի հավելաճից ենթակա չեն հարկման, իսկ ահա տոկոսները (վճարված արժեկտրոնները) հաշվառվում են համախառն եկամտում և հարկվում են 10 տոկոս դրույքաչափով: Ընդ որում, Ընկերությունը պարտատոմսերի մարման ժամանակ ֆիզիկական անձանց համար կհանդիսանա հարկային գործակալ: Պարտատոմսերից ստացված եկամուտների հարկման կանոնները նույնն են ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար:

Պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքները և պարտականությունները

Պարտատոմսերի սեփականատերերը իրավունք ունեն տեղաբաշխման սկզբից հաշված վեց ամիս պարբերականությամբ, ստանալ վճարվող արժեկտրոնային եկամուտը՝ դրանց հաշվարկման օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվարկման օրերը համարվում են տեղաբաշխման սկսման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ, 24-րդ, 30-րդ, և 36-րդ ամսվա համապատասխան օրերը:

Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն պարտատոմսերի մարման օրվանից հաշվարկված երեք աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությունից ստանալ պարտատոմսերի անվանական արժեքը:

Պարտատոմսերը սահմանված ժամկետում չմարելու դեպքում Ընկերությունը կարող է լուծարվել դատական կարգով: Ընկերության լուծարման դեպքում պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ծանոթանալ Ընկերության լուծարմանն առնչվող բոլոր փաստաթղթերին: Լուծարման հանձնաժողովը մամուլում հայտարարություն է գետեղում Ընկերության լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի և ժամկետի մասին: Պարտատոմսերի կողմից պահանջներ ներկայացնելու ժամկետն ավարտվելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է միջանկյալ լուծարման հաշվեկշիռ, որը տեղեկություններ է պարունակում լուծարվող Ընկերության գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի, ինչպես նաև պահանջների քննարկման արդյունքների մասին: Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի, Ընկերության պարտատերերին վճարումները կատարվում են ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ, որի համաձայն Ընկերության կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են հինգերորդ հերթին: Ընդ որում յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարելուց հետո: Պարտատոմսերի սեփականատերերը կարող են օգտվել օրենքով և իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:

Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ինքնուրույնաբար տնօրինել, տիրապետել և օգտագործել իրենց սեփականության ներքո գտնվող պարտատոմսերը: Ընդ որում, պարտատոմսերի վաճառքը կարող է կատարվել ինչպես Հայաստանի ֆոնդային բորսայում, այնպես էլ բորսայից դուրս՝ մինչ պարտատոմսերի ցուցակումը: Պարտատոմսերը Ֆոնդային բորսայում ցուցակվելուց հետո, պետք է շրջանառվեն միայն ֆոնդային բորսայում, համաձայն «Արժեթղթերի Շուկայի մասին» ՀՀ օրենքի 129-րդ հոդվածի և ՀՀ կենտրոնական բանկի 16.04.2008թ. թիվ 125-Ն որոշման:

Պարտատոմսեր ձեռք բերող անձը պարտավոր է Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայում կամ որևէ լիցենզավորված պահառուի մոտ ունենալ անձնական հաշիվ՝ վերջինիս կողմից սահմանված կանոններին համաձայն: Ընդ որում, անձնական հաշվի բացման համար անհրաժեշտ է ունենալ դրամական հաշիվ որևէ բանկում:

Երկրորդային շուկայում պարտատոմսեր ձեռք բերող կամ օտարող անձը պարտավոր է իր հաշվին կատարել Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի կամ Հայաստանի Ֆոնդային Բորսայի կողմից սահմանված պարտադիր վճարները՝ կապված սեփականության իրավունքի գրանցման կամ գործարքների ձևակերպման հետ:

Պարտատոմսերի երկրորդային շուկայում մարքեթ-մեյքերի մասին տեղեկություններ

Ընկերությունը որևէ անձի հետ չի կնքել պայմանագիր, համաձայն որի նշված անձը կհանդիսանա շուկա ստեղծող պարտատոմսերի երկրորդային շուկայում:

Պարտատոմսերի հաշվառմամբ զբաղվող կազմակերպություններ

Պարտատոմսերի պահպանումն ու հաշվառումն իրականացվելու է Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա ԲԲԸ-ում՝ ըստ համապատասխան կարգի:

Պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտականությունների հաշվառումը իրականացնելու է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ն. հասցեն՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Սիեր Մկրտչյան 5բ, հեռ. (37410) 566-446, 520-978:

Թողարկման նպատակը

Ընկերության կողմից պարտատոմսերի թողարկմամբ և տեղաբաշխմամբ ստացված միջոցները ամբողջովին ուղղվելու են շրջանառու միջոցների համալրմանը:

ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր տեղեկություններ

1. Թողարկողի պատմությունը և զարգացումը

ա. Ընկերության ֆիրմային լրիվ անվանումն է՝

«Շեն-Կոնցեռն» փակ բաժնետիրական ընկերություն

Закрывое акционерное общество «Шен-Концерн»

Closed Joint Stock Company «Shen-Concern»

Ընկերության կրճատ ֆիրմային անվանումն է՝

«Շեն-Կոնցեռն» ՓԲԸ

ЗАО «Шен-Концерн»

CJSC «Shen-Concern»

բ) Ընկերության կազմակերպարավական ձևը՝ փակ բաժնետիրական ընկերություն (գրանցված 28.12.1999թ.): Ընկերությունը հանդիսանում է «Շեն-Կոնցեռն» բաց բաժնետիրական ընկերության իրավահաջորդը՝ համաձայն 1999 թվականի դեկտեմբերի 16-ի հիմնադիր ժողովի արձանագրության:

«Շեն-Կոնցեռն» բաց բաժնետիրական ընկերությունը հանդիսանում է «Հայռետուրսիմպեքս» բաց բաժնետիրական ընկերության իրավահաջորդը, որն անվանափոխվել է 1998 թվականի մայիսի 22-ին կայացած բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից՝ անվանափոխության մասին որոշման համաձայն (արձանագրություն N1): «Հայռետուրսիմպեքս» բաց բաժնետիրական ընկերությունն իր հերթին հանդիսանում է ՀԽՍՀ Պետմատի 31.03.1970թ.-ի N80 հրամանի համաձայն ստեղծված «Հայգունմետվաճառ» ձեռնարկության իրավահաջորդը, որն անվանափոխվել է՝ համաձայն ՀՀ նյութական ռեսուրսների մախարարության 30.12.1993թ.-ի հրամանի, որպես՝ «Հայռետուրսիմպեքս» առևտրա-միջնորդային ֆիրմա: Վերջինս, համաձայն՝ ՀՀ կառավարության 06.07.1995թ.-ի N 575 որոշման սեփականաշնորհվել է և վերակազմավորվել որպես «Հայռետուրսիմպեքս» բաց բաժնետիրական ընկերություն, հանդիսանալով «Հայռետուրսիմպեքս» առևտրա-միջնորդային ֆիրմայի իրավահաջորդը:

գ) Ընկերությունը առաջին անգամ գրանցվել է 21.12.1995թ.-ին, վկայական N 01Ա021114, գրանցման համարը 269.130.01.032 որպես «Հայռետուրսիմպեքս» ԲԲԸ: Վերջին անգամ Ընկերությունը գրանցվել 30.06.2005թ.-ին, վկայական N 01Ա021114, ներդիր N 012՝ «Շեն-կոնցեռն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի փոփոխություն: Ընկերությունը փաստացի գործունեություն է իրականացնում 1995 թվականից առ այսօր:

Ընկերությունը գրանցվել է Հայաստանի Հանրապետությունում:

2. Ֆինանսական և այլ խմբերի վերաբերյալ տեղեկություններ

Ընկերությունը որևէ արդյունաբերական, բանկային, ֆինանսական խմբերում, հողինգներում, կոնցեռններում և միություններում մասնակցություն չունի:

3. Թողարկողի աուդիտն իրականացնող անձինք

ա. Վերջին երեք տարիների ընթացքում Ընկերության աուդիտն իրականացրել է «ԹՄ Աուդիտ» Փակ Բաժնետիրական Ընկերությունը՝ հասցեն ք. Երևան, Տերյան 105/1, հեռ. (+374 10) 51-43-14:

բ. Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ընթացքում թողարկողի աուդիտն իրականացրած անձանց կողմից աշխատանքից հրաժարման, վերընտրությանը չմասնակցելու, աշխատանքից ազատման դեպքեր չեն եղել:

4. Փորձագետների մասնագիտական կարծիքը և այլ անձանցից ստացված տեղեկությունները

Թողարկողը չունի փորձագետ կամ խորհրդատու, որոնց մասնագիտական կարծիքն օգտագործվել է սույն ազդագրում:

5. Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների երաշխավորողի վերաբերյալ տեղեկություններ

Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների երաշխավորող անձ չկա, քանի որ վերջիններս առանց ապահովման են:

6. Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի չափը

Թողարկողի կանոնադրական կապիտալը 1,500,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) դրամ է: Ընկերության տեղաբաշխել է հասարակ անվանական բաժնետոմսեր, 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, որնք 100%-ով վճարված են: Վերջին երեք տարիների ընթացքում կանոնադրական կապիտալի փոփոխություն տեղի է ունեցել միայն 2005 թվականին՝ կանոնադրական կապիտալը 950.000.000 ՀՀ դրամից դարձել է 1.500.000.000 ՀՀ դրամ՝ բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման միջոցով:

Չվճարված բաժնետոմսեր չկան:

Կանոնադրական կապիտալի մեծացման վերաբերյալ դեռևս մտադրություններ չկան:

7. Թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի նկատմամբ առկա օպցիոնների վերաբերյալ տեղեկություններ

Ընկերության կողմից թողարկված արժեթղթերի նկատմամբ առկա օպցիոններ չկան:

Թողարկողի գործունեության վերաբերյալ տեղեկություններ

1. Ռիսկային գործոններ

Պարտատոմսերում ներդրումը կապված է որոշակի ռիսկերի հետ: Պոտենցիալ ներդրողը, մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը, պետք է շրջահայաց լինի և հաշվի առնի ստորև բերված ռիսկերը և սույն ազդագրում ներառված այլ տեղեկատվությունը: Ստորև նշված ռիսկերը կամ դրանց մի մասը կարող են բացասաբար անդրադառնալ պարտատոմսերի առուվաճառքի գների վրա, և որպես արդյունք՝ հանգեցնել նրան, որ ներդրողը կարող է կորցնել ներդրված գումարը կամ դրա մի մասը:

Ընդհանուր առմամբ Ընկերության ողջ գործունեությունը նպատակը շահույթի ստացումն է, և կատարված ողջ «ներդրումների» արդյուքը ընդհանուր առմամբ կարելի է համարել շահույթաբեր, սկսած Ընկերության գործունեության սկզբից: Չնայած այն հանգամանքին, որ ֆինանսական արդյունքների մեջ որոշակի ժամանակահատվածներում շահույթը ունի տարբեր մակարդակներ այնուամենայնիվ կարելի է ասել, որ Ընկերության ֆինանսական դրությունը կայուն է, սակայն կան բացասական գործոններ, որոնք Ներդրողը պետք է հաշվի առնի՝ ելնելով ստորև բերված ռիսկերից և սույն ազդագրում ներառված այլ տեղեկատվություններից:

Պոտենցիալ ներդրողը պետք է գիտակցի, որ ստորև բերված ռիսկերը ոչ բոլոր ռիսկերն են, որ թողարկողը կարող է երբևէ կրել: Թողարկողը բացահայտել է միայն այն ռիսկերը, որոնք նա համարել է էական: Ենթադրաբար կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք Թողարկողն այժմ չի համարում էական կամ, որոնք ներկայումս հայտնի չեն, և ցանկացած այդպիսի ռիսկ կարող է թողնել վերևում նշված ազդեցությունն ու հետևանքը:

Պարտատոմսերի հետ կապված ռիսկեր: Պարտատոմսերի թողարկման ժամանակ դրանք չունեն առևտրի հայտնի և կազմակերպված շուկա: Եթե այդպիսի շուկա չձևավորվի, ապա չի կարող լինել որևէ երաշխիք, որ կլինի թողարկվող պարտատոմսերի երկրորդային շուկա կամ այդպիսի շուկայի իրացվելիություն: Հետևաբար, ներդրողները կարող են հնարավորություն չունենալ վաճառել իրենց պարտատոմսերը իրենց համար ձեռնտու գնով կամ այնպիսի գնով, որը թույլ կտա նրանց ստանալ՝ զարգացած երկրորդային շուկա ունեցող մնանատիպ գործիքների հետ համեմատելի եկամտաբերություն: Հայաստանի ֆինանսական շուկայում առկա տոկոսադրույքների տատանումը կարող է բացասաբար ազդել պարտատոմսերի եկամտաբերության և իրացվելության ցուցանիշների վրա:

Ներդրողները պետք է խորհրդակցեն իրենց իրավաբանների հետ պարզելու համար, թե արդյոք պարտատոմսերում ներդրումը հանդիսանում է իրավաբանորեն թույլատրելի ներդրում, և ինչպես ու ինչ ձևով պարտատոմսերը կարող են օգտագործվել որպես գրավի առարկա զանազան փոխառությունների համար: Դեռ ավելին, ֆինանսավարկային կազմակերպությունները պետք է խորհրդակցեն իրենց իրավաբանների կամ կարգավորող մարմինների հետ պարզելու համար պարտատոմսերով գործաքների համապատասխանությունը՝ ակտիվների ռիսկերի կշռման կամ կիրառելի մնանատիպ այլ կանոններին:

Թողարկողի գործունեության հետ կապված ռիսկեր: Հայաստանի մակրոտնտեսական իրավիճակի և շինարարության շուկայի փոփոխությունները կարող են ազդել թողարկողի իրացման ծավալների վրա: Հայաստանում շինարարության ծավալների զգալի փոփոխության հավանականությունը թվում է որ կլինի ոչ էական, հաշվի առնելով տնտեսության այդ հատվածի տարեկան 11-13% կայուն աճը: Այնուամենայնիվ, այն չպետք է ազդի թողարկողի՝ փոխառությունները վերադարձնելու հնարավորությունների վրա, ինչը հավաստվում է թողարկողի գոյապահող քաղաքականությամբ, բավարար իրացվելիությամբ, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից շնորհված «Բ» վարկանիշով:

Ընկերությունը որոշակի կախվածություն ունի հումքի ներկրումից, քանի որ Ընկերության մատակարարումների զգալի մասը կազմում է ներմուծումը: Ուստի ցանկացած իրադարձություն, որը կբերի մատակարարումների երկարաժամկետ խաթարման (օրինակ Հայաստանը արտաքին աշխարհի հետ կապող ճանապարհների

հնարավոր պրոբլեմներ), կարող է բացասական ազդեցություն ունենալ Ընկերության բնականոն գործունեության վրա:

Աշխարհաքաղաքական և ներքաղաքական իրավիճակի անբարենպաստ փոփոխությունների արդյունքում հնարավոր է առաջ գան այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ երկրում ընդհանուր տնտեսական իրավիճակի վրա, կարող են բերել տնտեսական ակտիվության և բնակչության եկամուտների նվազման, որն էլ իր հերթին բացասաբար կազդի Թողարկողի իրացման ծավալների վրա:

2. Թողարկողի հիմնական գործունեության նկարագիրը

ա. Ընկերությունը ներկայումս զբաղվում է շինանյութերի (ներկերի, չոր շաղախների (մածիկների և կապակցող նյութերի), բետոնե բլոկների արտադրությամբ, շինարարական աշխատանքների իրականացմամբ, և շինարարական սպրանքների առևտրով: Ընկերության իրականացրած բազմատեսակ գործունեությունը հիմնականում առնչվում է շինարարության ոլորտին: Այնուհանդերձ Ընկերության համար առավել կարևոր գործունեության ոլորտներից կարելի առանձնացնել շինարարությունում ներքին և արտաքին հարդարման համար օգտագործվող նյութերի և բետոնե իրերի արտադրությունը: Սինչ այժմ Ընկերությունը իր արտադրանքը գրեթե սպառել է միայն տեղական շուկայում:

Ընկերությունը իրականացնում է նաև վարագույրների ներկրում և վաճառք, որը լինելով նոր, դեռևս իրացման մեծ ծավալներ չունի:

Ընդհանուր առմամբ Ընկերության իրականացրած գործունեությունը ունի աճի ընդհանուր միտում, որը հետևանք է տնտեսության զարգացման և ՀՀ-ում աճող շինարարության ծավալների աճի:

բ. Ընկերության վաճառած առաջնային նշանակություն ունեցող ապրանքների հիմնական բնութագրիչները (զին, ծավալ) նախորդ 3 տարվա և ընթացիկ տարվա համար ներկայցված է ստորև բերված աղյուսակում.

Ապրանքատեսակը	2005 թ-ի իրացման		2006 թ-ի իրացման		2007 թ-ի իրացման		2008 թ-ի I-IX ամիսների իրացման	
	1 տոննայի միջին զինը (հազ. դրամ)	ծավալը (տոննա)	1 տոննայի միջին զինը (հազ. դրամ)	ծավալը (տոննա)	1 տոննայի միջին զինը (հազ. դրամ)	ծավալը (տոննա)	1 տոննայի միջին զինը (հազ. դրամ)	ծավալը (տոննա)
Ներկեր	467.1	763	459.9	1017	356.7	1404	372.9	1101.1
Չոր շաղախներ	130,8	5205,8	109,6	6802,3	92.1	10616	97.9	9148.5
Բետոնե բլոկներ	19,7	20	15,5	19555	16.1	21793	19.2	13491.6

Ընկերությունը բնական ռեսուրսների արդյունահանմամբ դեռևս չի զբաղվում, չնայած նրան, որ Ընկերությունը ունի հանքարդյունահանման լիցենզիա, որով նախատեսվում է Փարաքարի գիպսատար ապարների հանքավայրից 1200 հազար տոննա արդյունահանման ընդհանուր ծավալով գիպսատար կավի արդյունահանում:

գ. Ընկերությունը իր արտադրանքը իրացնում է ինչպես տեղական շուկայում, այնպես էլ դրսում՝ մասնավորապես Վրաստանում: Սակայն Վրաստանյան շուկայում ընկերության արտադրանքի իրացման ծավալները դեռևս շատ փոքր են և էական ազդեցություն չունեն ընկերության գործունեության արդյունքների վրա:

Ընկերությունը շուկայում, կարելի է ասել, գրավում է միջին դիրք, քանի որ տարբեր արտադրատեսակների համար Ընկերությունը զբաղեցնում է տարբեր դիրք շուկայում: Օրինակ՝ ներկերի շուկայում Ընկերության բաժինը կազմում է 19%, իսկ շաղախների շուկայում Ընկերությանը բաժին է ընկնում մոտ 71%-ը:

Ընկերության եկամուտները հիմնականում ձևավորվել են առաջնային նշանակություն ունեցող գործունեության տեսակներից, այն է՝ ներկերի, խառնուրդների, բետոնի, բետոնե արտադրանքների արտադրությունից և իրացումից: Նախորդ երեք ֆինանսական տարիներին և ընթացիկ տարվա 1-9 ամիսներին Ընկերության եկամուտների խոշոր մասը կազմող արտադրանքի վաճառքից ստացված հասույթների նկարագրությունը բերված է հետևյալ աղյուսակում:

Արտադրանքի անվանումը	2005 թ.		2006 թ.		2007 թ.		2008թ. I-IX ամիսներ	
	ծավալը (հազ. դրամ)	բաժինը (%)	ծավալը (հազ. դրամ)	բաժինը (%)	ծավալը (հազ. դրամ)	բաժինը (%)	ծավալը (հազ. դրամ)	բաժինը (%)
Ներկեր	356356	28.7	467704	20.3	500809	18.0	410595	18.5
Չոր շաղախներ	680734.2	54.8	745831	32.4	977376	35.2	895638	40.4
Բետոնե բլոկներ	393	0.5	303326	13.2	350803	12.6	259038	11.7

Ընկերությունը իր արտադրանքը իրացնում է հիմնականում հիմնվելով հետևյալ սկզբունքի վրա՝ որպես արտադրող Ընկերությունը նախընտրում է ավելի շատ գործ ունենալ խոշոր գնորդների հետ (խոշոր շինարարական կազմակերպություններ և մեծ խանութներ), ինչն ըստ էության արդյունավետ մոտեցում է: Իսկ իրացման ուղիները ներկայացվում են հետևյալ աղյուսակում՝

ԻՐԱՑՄԱՆ ԵՎԱՆԱԿԸ	ՄԱՍԸ
Շուկաներ	8%
Խոշոր մանրածախ / մեծածախ խանութներ	35%
Փոքր մանրածախ խանութներ	16%
Ուղղակի վաճառք շինարարական ընկերություններին	41%

Ընկերության արտադրանքի հիմնական սպառողները շինարարական ընկերություններն ու անհատներն են: Անհատ սպառողները կազմում են բնակչության մոտ 35%-ը, որոնք ի վիճակի են ձեռնարկել որևէ տեսակի շինարարական գործունեություն: Բնակչության այս մասը հիմնականում 35-ից 60 տարեկան անձինք են, որոնք նախընտրում են եվրոպական կամ ավանդական հայկական ոճը, իսկ ընտրություն կատարելիս որպես հիմնական գործոններ հաշվի են առնվում որակը և գինը հավասարապես: Ընկերության չունի իր արտադրանքի այնպիսի սպառողներ, որոնց բաժին է ընկնում իրացումից ստացված տարեկան ընդհանուր հասույթի խոշոր մասը:

դ. Ընկերության հիմնական մրցակիցներ հայաստանյան արտադրողներից կարելի է նշել «Քրաուն քեմիքալ» և «Պաչո» ընկերությունները: Շուկայում նրանց մասնաբաժնի և կիրառվող սպառման հիմնական մեթոդների մասին հավաստի տվյալները բացակայում են, սակայն նշենք, որ նրանց արտադրանքը առաջարկվում է համեմատաբար ցածր գնով, որակի առավել ցածր մակարդակի պայմաններում: Իսկ բետոնե սալանքները ուղղակի մրցակիցներ չունեն շուկայում:

Նոր մրցակիցներ ի հայտ գալու վերաբերյալ տեղեկությունները չկան:

ե. Ընկերությունը խոշոր մատակարարներն են՝ «Արարացեմենտ» ՓԲԸ-ն, Ahmad Lotf Khodaci (Իրան), Hercules Doel B.V.B.A. (Բելգիա), Shogaei Trading Co. (Իրան), Gunkem (Թուրքիա), Hamid Reza Hatami (Իրան), որոնց բաժին է ընկնում համապատասխանաբար մատակարարումների 45 տոկոսը:

Ընկերության բոլոր մատակարարումների մեջ ներմուծումը 2008թ. 1-9-րդ ամիսներում կազմել է 1345886 հազ. դրամ, որը ամբողջ մատակարարումների 69%-ն է

զ. «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի կողմից նախորդ երեք տարիների ընթացքում ինչպես նաև գործողության մեջ գտնվող կնքված այն պայմանագրերի վերաբերյալ տեղեկությունները, որոնց գինը գերազանցում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի (30.06.2008թ. – 6528788 հազ. դրամ) 3%-ը (195 մլն ՀՀ դրամը) ստորև բերված աղյուսակում:

ՀՀ	Պայմանագրի առարկան	Այն անձանց անվանումը, ում հետ կնքվել է պայմանագիրը	Պայմանագրի գինը	Գործողության ժամկետը
1	Վարկի տրամադրում	«Էյ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	700000 USD	03.06.2005-01.07.2010 (վաղաժամկետ մարվել է)
2	Ծառայությունների մատուցում	«ՀԱԷԿ» ՓԲԸ	229716000 AMD	20.06.2006-30.12.2006
3	Ծառայությունների մատուցում	«ՀԱԷԿ» ՓԲԸ	334291000 AMD	24.07.2007-01.11.2007
4	Վարկի ստացում	Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ	5100000 USD	19.11.2007-26.10.2012
5	Փոխառության տրամադրում	Շեն-Ջորջիա ՍՊԸ (Վրաստան)	2320000 USD	18.04.2008-30.09.2009
6	Վարկի ստացում	Ամերիաբանկ	1221480000 AMD	17.06.2008-17.06.2013
7	Փոխառության տրամադրում	Բեգլարյան Սամվել	800622425	24.06.2008-24.06.2009
8	Փոխառության տրամադրում	Հասրաթյան Արա	311807576	24.06.2008-24.06.2009

է) Ընդհանուր առմամբ Ընկերությունը՝ իր գործունեության իրականացման համար ունի երկու լիցենզիա, որոնք ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Լիցենզիայի համարը	Գործունեության տեսակը	Լիցենզիայի տրման ամսաթիվը	Լիցենզիայի գործողության ժամկետը	Լիցենզավորող մարմնի անվանումը
ՀԱ-Լ-14/9	Հանքաարդյունահանում	24.07.2003թ.	մինչև 24.07.2015թ.	ՀՀ Առևտրի և Տնտեսական զարգացման նախարարություն
11375	Կապիտալ շինարարության իրականացում, ըստ քաղաքաշինության քաղաքացիական և արդյունաբերական ոլորտի	20.11.2007թ.	մինչև 20.11.2010թ	ՀՀ Քաղաքաշինության նախարարություն

3. Թողարկողի հիմնական և ոչ հիմնական գործունեության մեջ ներգրավված գույքը

Ընկերության ադմինիստրատիվ և արտադրական տարածքները տեղակայված են՝ ՀՀ, ք. Երևան, Շիրակի 2/2, Շիրակի 2/3, Շիրակի 2/4, Շիրակի 2/5 հասցեներում: Ընկերությանը պատկանող հողատարածքի չափը կազմում է մոտ 5 հա: Նշված տարածքում տեղակայված են Ընկերության՝ 1350 մ² մակերեսով վարչական շենքը, 10368 մ², 10000 մ², 1944 մ², 340 մ² մակերեսներով արտադրական շենքերը և 1100 մ² մակերեսով խանութը, ինչպես նաև կաթսայատունը, ավտոկանգառը, բեռնատարների համար նախատեսված կշեռքը: Բացի այդ Ընկերությունը ունի 1280.4 ք.մ վարձակալված տարածք ՀՀ ք. Երևան Արշակունյաց 41 հասցեում և փոքր առևտրային տարածքներ Արշակունյաց 57/2 և Սեբաստիա 126 հասցեներում:

Սեփականության իրավունքով «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ին պատկանող, Շիրակի 2/4 հասցեում գտնվող 35 ք.մ. ընդհանուր մակերեսով ոչ բնակելի տարածքը վարձակալության պայմանագրի հիման վրա, 2005 թվականի հունիսի 7-ից անորոշ ժամկետով հանձնված է ժամանակավոր տիրապետման և օգտագործման «Քոնսթրաքշն ԷյՇԷՆ ընդ Սերվիս» ՍՊԸ-ին:

Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկի 2007 թվականի նոյեմբերի 11-ին կնքված Թիվ 38446 երկարաժամկետ վարկի պայմանագրի համաձայն Ընկերությանը 3 փուլերով տրամադրվել է 5100000 ԱՄՆ դոլար գումարի վարկ: Ընկերությունը, վարկի պայմանագրից բխող իր բոլոր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով, գրավ է դրել սեփականության իրավունքով իրեն պատկանող հետևյալ ակտիվները՝

- Շիրակի 2/4 հասցեով՝ 2347.6 ք.մ. մակերեսով բետոնե բլոկների արտադրամասը իր համապատասխան ենթակառուցվածքներով և 1.023 հա հողամասը :
- Շիրակի 2/5 հասցեով՝ 1201.7 ք.մ. մակերեսով վարչական մասնաշենքը, 412 ք.մ մակերեսով հացի փուռը և 0.34 հա հողամասը,

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ի 2008 թվականի հունիսի 17-ին կնքված Թիվ 000635ՎԳ երկարաժամկետ վարկի պայմանագրի համաձայն Ընկերությանը 2 փուլերով տրամադրվել է 122148000 դրամ գումարի վարկ: Ընկերությունը, վարկի պայմանագրից բխող իր բոլոր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով, գրավ է դրել սեփականության իրավունքով իրեն պատկանող հետևյալ ակտիվները՝

- Շիրակի 2/2 հասցեով՝ 13874.2 ք.մ մակերեսով գլխավոր մասնաշենքը, կաթսայատունը, կշեռքը, ջերմոցը, ծածկոցը, անցակետը, էլեկտրական ենթակայանը, լիցքավորման կետը, կենց. մասնաշենքը և 3.477 հա հողամասը, ինչպես նաև «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ին պատկանող Ամիրյան 27 հասցեում գտնվող ֆիտնես սկումբը:

«ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն 2008 թվականի հուլիսի 18-ին կնքված Թիվ LGL 2008923 վարկային գծի պայմանագրի համաձայն Ընկերությանը տրամադրվել է 350000 ԱՄՆ դոլար գումարի վարկ: Ընկերությունը, վարկային գծի պայմանագրից բխող իր բոլոր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով, գրավ է դրել սեփականության իրավունքով իրեն պատկանող հետևյալ ակտիվը՝

- Շիրակի 2/3 հասցեով՝ 1100 ք.մ. մակերեսով խանութ-սրահը և 0.11 հա հողամասը,

Ընկերությունն իրավունք ունի օգտագործել վերը նշված գրավի առարկաները դրանց նշանակությանը համապատասխան: Ընկերությունը իրավունք ունի գրավի առարկան հիմնական վերակառուցման ենթարկել, այլ անձի օգտին գրավ դնել, վարձակալության, անհատույց օգտագործման տալ, օտարել կամ որևէ այլ կերպ տնօրինել միայն Բանկի նախնական գրավոր համաձայնությամբ:

Արշակունյաց 41 հասցեում գտնվող 1280.4 ք.մ տարածքը ընկերությունը վարձակալել է 3 պայմանագրերով՝

N	պայմանագրի կողմը	տարածքը (ք. մ)	վարձակալության ժամկետը	վարձավճարը (ամսեկան, դրամ)	սահմանափակումները
1	«Վիսաֆեր տեխնոպարկ» ՓԲԸ	317	01.01.2007-31.12.2009	1.485.000	Ընկերությունը իրավունք ունի միայն օգտագործել նշված տարածքը, կամ հանձնել ենթավարձակալության վարձատուի գրավոր համաձայնությամբ
2	«Բարվա» ՍՊԸ	489.6	01.01.2007-31.12.2009	1.958.400	Ընկերությունը իրավունք ունի միայն օգտագործել նշված տարածքը, կամ հանձնել ենթավարձակալության վարձատուի գրավոր համաձայնությամբ
3	«Մամուշ Սիստեմս» ՓԲԸ	473.8	01.03.2007-28.02.2010	1.895.200	Ընկերությունը իրավունք ունի միայն օգտագործել նշված տարածքը, կամ հանձնել ենթավարձակալության վարձատուի գրավոր համաձայնությամբ

Ընկերության մեքենա-սարքավորումների տեսականին բազմազան է, շուրջ 100 անվանում:
Մեքենա - սարքավորումների արտադրողականությունը հետևյալն է՝

Հ/Հ	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը (չափը, արտադրողականությունը)
1.	Ներկերի և լաքերի արտադրամաս	պատրաստում է լաքի, գունանյութի, ջրային և ալկիդային հիմքով ներկի խառնուրդներ, այնուհետև տարայավորում է տալով ժամում 1-1.2 տոննա արտադրանք
2.	Չոր շաղախների արտադրամաս	պատրաստում է ծեփամածիկի, սվաղի սալիկի սոսինձի խառնուրդներ, այնուհետև պարկավորում է տալով ժամում 7-8 տոննա արտադրանք
3.	Բետոնե բլոկների և սալիկների արտադրամաս	պատրաստում է բետոնե խառնուրդ, այնուհետև վիբրացիոն մամլիչով ժամում 1500 հատ բետոնե բլոկ և սալիկ է պատրաստում. տեղափոխում է չորանոց, որից հետո դասավորում է իրար վրա

Ընկերությունը ունի թվով 34 հաստ տրանսպորտային միջոցներ՝

Տրանսպորտային միջոցի անվանումը	արտադրման տարեթիվը	Տրանսպորտային միջոցի անվանումը	արտադրման տարեթիվը
ՎԱԶ-21099	2001	ԳԱԶ-33021-212	2006
ՎԱԶ-21099-119	2004	ԳԱԶ-33021-212	2006
ԳԱԶ-31029	1993	Զիլ-4415	1989
ԳԱԶ-31105	2004	ԳԱԶ-332705	2007
ՎԱԶ-21074	2007	ԶԻԼ-431410	1988
ՎԱԶ-21074	2007	Զիլ-130	1982
ՎԱԶ-21074	2007	ԶԻԼ-431410	1987
ՎԱԶ-21074	2007	ԶԻԼ-431610	1989
ԳԱԶ-330210	1996	ԳԱԶ-3302-1414	2007
ԳԱԶ-2705	2002	Կամազ-5511	1987
ԻԺ-2715	1990	ԶԻԼ ՄՄԶ-45021	1987
Երազ-762	1991	Զիլ-130	1971
Երազ-762	1991	Զիլ-130	1969
Երազ-762	1991	Կամազ-5320	1985
Կամազ-5410	1989	ԳԱԶ-53-27	1986
ԶԻԼ-431610	1989	Զիլ-130	1984
ԳԱԶ-33021-212	2005	Զիլ-130	1975

4. Այն անձանց անվանացանկը, որտեղ թողարկողը, ներառյալ՝ նրա դուստր ընկերությունները, բաժնային արժեթղթերի նշանակալից կամ խոշոր սեփականատեր են

Շեն-Կոնցեռն ՓԲԸ-ն բաժնետեր է «Շեն Ջորջիա» ՍՊԸ-ում և տիրապետում է ունի 35% բաժնեմաս: «Շեն Ջորջիա» ՍՊԸ-ն գտնվում է Վրաստանի Հանրապետությունում: «Շեն Ջորջիա» ՍՊԸ-ն դեռևս ստեղծման փուլում է և պետք է իրականացնում է շինարարական ապրանքների արտադրություն և շինարարություն:

5. Հարկային արտոնությունները

Ընկերությունը չի օգտվում որևէ հարկային արտոնությունից:

6. Գատական և իրավական ընթացակարգը

Նախորդ 12 ամիսների ընթացքում դատարանի, պետական իշխանության լիազորություններ իրականացնող մարմնի կողմից Ընկերության նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցները հետևյալն են:

Կիրառման ամսաթիվը	Պատասխանատվության ենթարկող մարմինը	Պատասխանատվության ենթարկելու հիմքը (պատճառները)	չավեր (հազ. դրամ)		կատարման աստիճանը
			լրացուցիչ գանձման ենթակա հարկը, պարտադիր վճարը	Հաշվարկված տույժերը և տուգանքներ	
07.08.2008թ.	ՀՀ Կառավարության առընթեր հարկային պետական ծառայություն	Ստուգման արդյունքում ԱԱՀ-ի և սոց. վճարների ավելացում:	8079.3	4454.8	կատարվել է ամբողջովին

Ընկերությունը ընդգրկված չէ որևէ դատական պրոցեսում:

7. Փոխկապակցված գործարքների վերաբերյալ տեղեկություններ

Ընկերության փոխկապակցված անձանց հետ վերջին երեք տարիների կնքված պայմանագրերը ներկայացված են ստորև՝

1. Ընկերությունը՝ 24.06.08թ-ին և 25.06.08թ-ին համապատասխանաբար 1,000,000 ԱՄՆ դոլար և 1,700,000 ԱՄՆ դոլարի վարկ է ստացել Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկից, 19.11.2007թ-ին վերջինիս հետ կնքված պայմանագրով (մասը եկամուտներում՝ 30.06.2008թ.-ին համապատասխանաբար՝ 21.1% և 35.79%):
2. 24.06.08թ-ից 26.06.08թ-ը 1-ին կետում նշված նպատակային վարկերից Ընկերությունը տրամադրել է փոխառություն իր երկու բաժնետերերին 1,112,430,001 դրամի չափով, որից Բեգլարյան Սամվելին - 800,622,425 դրամ և Հասրաթյան Արային - 311,807,576 դրամ գումարների չափով Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկից Ընկերության բաժնետոմսերը գնելու համար (մասը եկամուտներում՝ 30.06.2008թ.-ին 77.52%):
3. Ընկերությունը փոխառություն է տրամադրել Շեն-Ջորջիա ՍՊԸ-ին (Վրաստան) 2320000 ԱՄՆ դոլարի չափով, որի գործողության ժամկետն է 18.04.2008թ.-ից 30.09.2009թ. (մասը եկամուտներում՝ 30.06.2008թ.-ին 50.15%):

8. Թողարկողի նախատեսվող գործունեությունը և հեռանկարները

Ընկերության 2009թ հիմնական նպատակները հետևյալներն են.

- Հայաստանում 30%-ից ավել վաճառքի աճի ապահովումը, ի շնորհիվ ամենամյա աճի և զարգացման տեմպերի, ինչպես նաև լրիվ նոր որակի գործարանում չոր շաղախների արտադրության և այդ մասին պարբերաբար գովազդման միջոցով,
- Մեր կողմից արդեն կառուցման ավարտին մոտեցող նոր կավիճի արտադրամասում կավճափոշու ստացում, ինչպես նաև գիպսի վերամշակման արտադրամասի կառուցում և գիպսի ստացում, որոնք կբերեն ինքնարժեքի նվազման և նոր արտադրատեսակների վաճառքի՝
- Հայաստանում առաջին անգամ մեքենայացված ձևով շենքերի ներքին պատերի գիպսի խտանյութով հարդարում,
- Վրաստանյան շուկայում վաճառքների ծավալների մեծացում Շեն-Ջորջիա վրաստանյան ընկերության միջոցով,
- կերամիկական ապրանքների, շինարարական, ներքին հարդարման աշխատանքների համար նախատեսված ապրանքների վաճառքի կազմակերպում կապիտալ վերանորոգվող խանութ – սրահում,
- արտադրանքի (ներկ և լաք, չոր շաղախ և սոսինձ, բետոնե բլոկ և սալիկ), ապրանքների (վարագույր, վարագուրակալ, տեքստիլ ապրանք և ձևավորման արքեստար, ցեմենտ, այլ ապրանքներ), աշխատանքների (շինարարություն և ներքին հարդարման աշխատանքներ, բետոնե սալիկների շարում) և ծառայությունների (վարագույրների կարում, ձևավորում տեղադրում, մետաղի բեռում, բեռնաթափում) առաջարկվող տեսականու որակի և քանակի ³ í »**Զ** **Օ** **Ձ** ինչպես նաև նոր տեսակների (կավճափոշի, գիպսի խտանյութ և դրանով պատերի հարդարում, կերամիկական ապրանքներ և այլն) առաջարկում:

2008թ-ի 11-րդ, 12-րդ ամիսների և 2009 թվականին նախատեսված երկարաժամկետ ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները՝

Նպատակ	Գործառույթ	Նախատեսված գումարը կապիտալ ծախսերի բյուջեում (մլն դրամ)
Պատրաստի արտադրանքի ինքնարժեքի նվազեցում	Կավիճի արտադրամասի և ենթակառուցվածքների շինարարության ավարտում	22.0
Պատրաստի արտադրանքի իրացման աճող ծավալների ապահովման համար	Պատրաստի արտադրանքի իրացման համար 3 բեռնատարներ	27.0
Չոր շաղախների աճող վաճառքի ծավալների ապահովման համար	Նոր չոր շաղախի արտադրամասի և ենթակառուցվածքների շինարարություն	70.0
	Չոր շաղախների արտադրության հոսքագծի վերջնական մարում	150.0
Արտադրական հզորություններին համապատասխանեցում և շուկայի ընդլայնում	Պատրաստի արտադրանքի իրացման համար 2 ամբարձիչներ	10.0
Գիպսի խտանյութի պատրաստում, որը կրերի պատրաստի արտադրանքի ինքնարժեքի նվազեցում և	Գիպսի խտանյութի վերամշակման սարքավորումների ձեռքբերում և տեղակայում գոյություն ունեցող շենքում և ենթակառուցվածքների պատրաստում	700.0
Գիպսի խտանյութով մեքենայացված ձևով շենքերի ներքին պատերի հարդարում	Գիպսի խտանյութը պատերին փշոլ 4 հատ մեքենաների ձեռքբերում	27.0
Կավիճի և գիպսի նախատեսվող հումքի մատակարարման ապահովում	Հումքի մատակարարման 4 հատ բեռնատարների ձեռքբերում	18.0
Կերամիկական ապրանքների, շինարարական, ներքին հարդարման աշխատանքների համար նախատեսված ապրանքների վաճառքի կազմակերպում	Շիրակի 2/3 հասցեում գտնվող խանութ – սրահի կապիտալ վերանորոգում	22.0

1. Խառնուրդների արտադրությունում հիմնական հումքերից է հանդիսանում կավճափոշին և գիպսը, որը ներկայումս ներմուծվում է Իրանից, որի արժեքում տրանսպորտային ծախսերը կազմում են 65%: Այն կազմում է խառնուրդների արտադրությունում օգտագործվող հումք և նյութերի 40%: Ներմուծվող հումքի փոխարինումը տեղականով էականորեն կնվազեցնի կավիճի և գիպսի արժեքները և դրանց տեսակարար կշիռը ընդհանուր հումքերում կիջացնի մինչև 15%: Տվյալ խնդրի իրագործման համար ընկերությունը կավարտվի 2008թ-ի վերջին, իսկ գիպսի վերամշակման արտադրամասի գործարկումը նախատեսվում է 2009թ-ի կեսերին:
2. Քանի որ 2008թ-ի հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսներին Ընկերությունը չէր կարողանում բավարարել չոր շաղախների աճող պահանջարկը, իսկ 2009 թ-ին նախատեսվում է, որ կվաճառվի և կարտահանվի Վրաստան ավելի շատ չոր շաղախներ, այդ իսկ պատճառով ցանկալի է մինչև 2008թ-ի նոյեմբեր ամիսը ձեռք բերել խառնուրդների արտադրության համար նոր հոսքագիծ 630.0 հազ. Եվրոյի չափով, որոնք կարող են ապահովել 2009թ-ի և մյուս տարիների նախատեսված ծավալները:
3. Գիպսի խտանյութի արտադրությունը կրերի գիպսի ինքնարժեքի նվազման, որը կհանդիսանա գաջի հավելանյութի այլընտրանք: Ինչպես նաև մեր կողմից արտադրված գիպսի խտանյութով նախատեսում ենք Հայաստանում առաջին անգամ կիրառել շենքերի ներքին պատերի մեքենայացված հարդարում, որի արտադրողականությունը 5 անգամ ավելի է, քան ներկայումս ձեռքի աշխատանքով կատարվելիք հարդարումը:

Թողարկողի ֆինանսական վիճակը և գործունեության արդյունքները

1. Ֆինանսական հաշվետվություններ

Ընկերության նախորդ երեք տարիների և 2008 թվականի երկու եռամսյակների ֆինանսական հաշվետվությունները կազմված են գործող պահանջների համապատասխան և ամբողջությամբ ներկայացված են ազդագրի էջ 29-88-ում:

2. Ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների փոփոխությունների վերաբերյալ տեղեկություններ

Ընկերության գործունեության արդյունքները, վերջին երեք տարիների և 2008 թվականի երկու եռամսյակների համար համառոտ, ներկայացված են հետևյալ աղյուսակում՝

Հոդվածի անվանումը	31.12.2005թ. (հազ. դրամ)	մասը հասույթի մեջ (%)	31.12.2006թ. (հազ. դրամ)	մասը հասույթի մեջ (%)	31.12.2007թ. (հազ. դրամ)	մասը հասույթի մեջ (%)	30.06.2008թ. (հազ. դրամ)	մասը հասույթի մեջ (%)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքի, ծառայությունների իրացումից հասույթ	1243292	100%	2305336	100%	2779004	100%	1241676	100%
Համախառն շահույթ (վնաս)	368816	30%	747573	32%	861639	31%	407438	33%
Գործառնական շահույթ (վնաս)	59803	5%	341957	15%	389946	14%	193351	16%
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	36139	3%	345115	15%	387809	14%	143649	12%


Ընթացիկ ակտիվների իրացվելության գործակիցը 31.12.2004թ. կազմել է **1.64**, 31.12.2005թ.՝ **2.60**, 31.12.2006թ.՝ **5.08**, 31.12.2007թ.՝ **2.32**, 30.06.2008թ.՝ **2.04** :

Ընկերության իրացվելի ակտիվները սեփական են:

Ակտիվների եկամտաբերությունը տոկոսներով ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

	31.12.2005թ.	31.12.2006թ.	31.12.2007թ.	30.06.2008թ.
Ակտիվների եկամտաբերությունը	1,16%	10,54%	8,23%	2,20%

Ընկերության 2005-2007թթ և 2008 թվականի երկրորդ եռամսյակի համախառն շահույթը և զուտ շահույթը՝ շահութահարկի գծով ծախսի նվազեցումներից հետո, ներկայացված են հետևյալ գրաֆիկում (հազ.դրամներով)



Ընկերության համախառն շահույթի և զուտ շահույթի աճը հիմնականում պայմանավորված է իրացման ծավալների և նոր արտադրատեսակների վաճառքով:

2008 թվականին համախառն շահույթի և զուտ շահույթ նվազումը պայմանավորված է ընկերության «սեզոնային բնույթ» ունեցող իրացման կրճատմամբ; ինչպես ցույց է տալիս նախորդ տարիների փորձը, ընկերության իրացման ծավալները մեծ աճ են ունենում հիմնականում հուլիս-նոյեմբեր ամիսների::

Իսկ 2006 թվականի գուտ շահույթի աճը, բացի իրացման ծավալների աճից որոն չափով պայմանավորված է մասն արտարժույթի փոխարժեքի նվազմամբ. 2006թ-ի արտարժույթի փոխարժեքի նվազումը բերեց ներկրվող հումքի էժանացման և արտարժույթի փոխարժեքային տարբերություններից եկամտի, քանի որ ընկերության պարտավորությունների մեծ մասը նշված ժամանակահատվածում Ընկերությունում հաշվառվում էին արտարժույթով (երկարաժամկետ դոլարով ստացված վարկ և արտասահմանյան մատակարարներին պարտավորություններ):

3. Ընկերության ֆինանսական գործունեությունը

ա) Ընկերության պարտավորությունները բաղկացած են ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորություններից, որոնց կառուցվածքը հետևյալն է՝

Ոչ ընթացիկ պարտավորություններ.

Հոդվածի անվանումը	31.12.2005թ. (հազ. դրամ)	31.12.2006թ. (հազ. դրամ)	31.12.2007թ. (հազ. դրամ)	30.06.2008թ. (հազ. դրամ)
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	144147	81152	454048	2076424
Հետաձգված հարկային պարտավորություններ	136213	136213	103075	103075
Ընդամենը՝	280360	217365	557123	2179499

«Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ» հոդվածում ներկայացված է Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկի և Ամերիաբանկի կողմից տրամադրված վարկերի երկարաժամկետ մասերը: Ընկերությունը հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչել է հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջացել են ֆինանսական և հարկային հաշվառումների տարբերության արդյունքում՝ կապված հիմնական միջոցների վերագնահատման հետ:

Ընթացիկ պարտավորություններ.

Հոդվածի անվանումը	31.12.2005թ. (հազ. դրամ)	31.12.2006թ. (հազ. դրամ)	31.12.2007թ. (հազ. դրամ)	30.06.2008թ. (հազ. դրամ)
Կարճաժամկետ բանկային վարկեր	132 940	50890	511301	749535
Կարճաժամկետ փոխառություններ		18365	110377	73584
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	128 449	81716	102279	116978
Ստացված ընթացիկ կանխավճարներ	11 441	8384	168000	185198
Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին	4 809	6055	647	445
Կարճաժամկետ կրեդիտորական պարտք պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	1 283	2555	10549	10614
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	19 470	21046	47827	49965
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին (հիմնադիրներին)	4			275000
Այլ կրեդիտորական պարտքեր	1 480	1		
Ընթացիկ պահուստներ		10000	10000	
Ընդամենը՝	299876	199012	960980	1461319

«Կարճաժամկետ բանկային վարկեր» հոդվածում ներկայացված է HSBC բանկի կողմից տրամադրված վարկային գծի օգտագործված մասը և Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկի ու Ամերիաբանկի կողմից տրամադրված վարկերի կարճաժամկետ մասերը:

Կարճաժամկետ փոխառություններ հոդվածում արտացոլված է ընկերության կողմից թողարկված պարտատոմսերի վաճառքից առաջացած պարտավորությունները, իսկ 30.06.2008թ.-ի դրությամբ մնացորդը վերաբերում է պարտատոմսերի երրորդ տրանշին, որը մարվել է 2008թ. սեպտեմբերի 2-ին:

Կրեդիտորական պարտքը ձևավորվել է հիմնականում հումքի և նյութերի մատակարարումներից: Բացի դրանից 2008 թվականի երկրորդ եռամսյակի կրեդիտորական պարտքերի մեջ զգալի տեղ է զբաղեցնում մաս կարճաժամկետ կրեդիտորական պարտքերը մասնակիցներին, որը հաշվարկված շահութաբաժնի դեռևս չվճարված մասն է:

Կրեդիտորական պարտքերի ըստ հոդվածների տեսակարար կշիռը ընդհանուր կրեդիտորական պարտքերի մեջ հետևյալն է՝

Հոդվածի անվանումը	31.12.2005թ.	31.12.2006թ.	31.12.2007թ.	30.06.2008թ.
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	82.61%	73.37%	63.41%	25.82%
Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին	3.09%	5.44%	0.40%	0.10%
Կարճաժամկետ կրեդիտորական պարտք պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	0.83%	2.29%	6.54%	2.34%
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	12.52%	18.90%	29.65%	11.03%
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին (հիմնադիրներին)	0.003%	0%	0.00%	60.71%
Այլ կրեդիտորական պարտքեր	0.95%	0%	0.00%	0.00%

բ) Ընկերության սեփական կապիտալը 2005 թվականից դեկտեմբերի 31-ից մինչև 2008 թվականի հունիսի 30-ը ունի հետևյալ տեսքը՝

Հոդվածի անվանումը	31.12.2005թ. (հազ. դրամ)	31.12.2006թ. (հազ. դրամ)	31.12.2007թ. (հազ. դրամ)	30.06.2008թ. (հազ. դրամ)
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի գուտ գումար	1 500 000	1 500 000	1 500 000	1 500 000
Էմիսիոն եկամուտ	225 167	225 167	225 167	225 167
Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ	530 781	530 781	546 226	546 226
Կուտակված շահույթ (վնաս)	125 539	424 149	698 030	391 577
Պահուստային կապիտալ	142 500	178 639	225 000	225 000
Ընդամենը	2 523 987	2 858 736	3 194 423	2 887 970

2005թ.-ին Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի կողմից կատարված ներդրումների հաշվին Ընկերության կանոնադրական կապիտալը կազմել է 1.5 մլրդ ՀՀ դրամ, իսկ կատարված ներդրումներից առաջացել է, 225167 հազար ՀՀ դրամի էմիսիոն եկամուտ:


«Վերագնահատումից և վերաչափումից տարբերությունները» հիմնականում առաջացել են 1999 և 2005 թթ. Ընկերության իրականացրած հիմնական միջոցների վերագնահատման արդյունքում, որը հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն հաշվեգրվում է չբաշխված շահույթին ակտիվն օգտագործելու ընթացքում՝ մաշվածության հաշվարկմանը զուգընթաց:

Ինչպես երևում է Ընկերության սեփական կապիտալը 2005-2007թթ. աճել է, ինչը պայմանավորված է հիմնականում կուտակված շահույթի ինչպես նաև պահուստային կապիտալի ավելացումով: Իսկ 2008 թվականի սեփական կապիտալ նվազումը պայմանավորված է կուտակված շահույթի նվազմամբ: Իսկ կուտակված շահույթը նվազել է «սեզոնային բնույթ» ունեցող իրացման ծավալների նվազման և հաշվարկված 450 մլն դրամ շտաբաբաժինների հետևանքով:

Թողարկողի կառավարման մարմինները և կառավարմանը մասնակցող անձինք

1. Ընդհանուր տեղեկություններ կառավարման մարմինների վերաբերյալ

ա) Ընկերության կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը հետևյալն է՝



Ընկերության **բաժնետերերի ընդհանուր ժողովը** կառավարման բարձրագույն մարմինն է:

1) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի (այսուհետև՝ ժողովի) իրավասությունները՝

ա) Ընկերության կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ (մասնակցող ձայների 3/4-ով),

բ) Ընկերության գործունեության տեսակների որոշումը (մասնակցող ձայների 3/4-ով).

գ) Ընկերության վերակազմակերպումը (մասնակցող ձայների 3/4-ով).

դ) Ընկերության լուծարումը (մասնակցող ձայների 3/4-ով, բայց ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից).

ե) լուծարային հանձնաժողովի նշանակումը, միջանկյալ, ամփոփիչ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը (մասնակցող ձայների 3/4-ով).

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի, անվանական արժեքի, դասի և տեսակի սահմանումը (մասնակցող ձայների 3/4-ով).

է) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

ը) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը (մասնակցող ձայների 3/4-ով, բայց ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից).

թ) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.

ժ) ժողովի վարման կարգի հաստատումը.

ժա) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

ժբ) Ընկերության վերստուգողի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

ժգ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ժդ) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, ինչպես նաև տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

ժե) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.

ժզ) Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց (խորհրդի անդամների և վերստուգողի) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը և նրանց գործունեության արդյունավետության գնահատումը.

ժէ) Ընկերության կողմից դուստր կամ կախյալ ընկերությունների, հողինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների ստեղծումը, ինչպես նաև դրանցում մասնակցությունը.

ժը) Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.

ի) շահագրգռվածության առկայության դեպքում, գործարքների կնքումը.

իա) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման (որի արժեքը գերազանցում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսը) հետ կապված խոշոր գործարքների կնքումը (մասնակցող ձայների 3/4-ով).

իբ) բաժնետոմսերի համախմբումը կամ բաժանումը.

իգ) Ընկերության տնօրենների խորհրդի և վերստուգողի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.

իդ) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Ընկերության կանոնադրությամբ սահմանված այլ որոշումների ընդունումը:

2) 1-ին կետով սահմանված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Ընկերության խորհրդին կամ գործադիր մարմնին:

3) Ժողովն իրավունք չունի քննարկել և որոշումներ ընդունել այն հարցերի շուրջ, որոնք «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և Ընկերության կանոնադրությամբ չեն սահմանվել որպես նրա իրավասություն:

4) Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ ձայնի իրավունք տվող (քվեարկող) բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ Ընկերության կանոնադրությամբ ձայների ավելի շատ քանակ սահմանված չէ:

5) Ժողովն իրավունք չունի փոփոխել ժողովի օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:

6) Բաժնետերերի պահանջով, ժողովի կողմից ընդունված որոշումները, ինչպես նաև քվեարկության արդյունքները որոշում ընդունելու պահից 45 օրվա ընթացքում պետք է ներկայացվեն բաժնետերերին՝ նրանց պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով:

7) Ժողովի որոշումները կարող են ընդունվել հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով): Տարեկան ժողովը, ինչպես նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67 հոդվածի 1-ին կետի «ժբ» ենթակետով սահմանված դեպքում հրավիրված ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկությամբ:

8) Ժողովին մասնակցելու իրավունք ունեն Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը (անվանատերերը), իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով:

9) Ընկերության բաժնետերերը, ինչպես նաև ժողովում խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու իրավունք ունեցող անձինք ծանուցվում են ժողովի գումարման մասին՝ նրանց պատվիրված նամակով համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելու կամ ծանուցումն առձեռն հանձնելու միջոցով: Ժողովի գումարման մասին գրավոր ծանուցումը պետք է ուղարկվի կամ առձեռն հանձնվի ժողովի գումարման օրվանից առնվազն 30 (երեսուն) օր առաջ, եթե օրենքով ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

10) Արտահերթ ժողովի գումարման կամ արտահերթ ժողովի գումարումը մերժելու մասին խորհրդի որոշումը պետք է ընդունվի Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջը ներկայացնելու ամսաթվից՝ 10 օրվա ընթացքում: Եթե սահմանված ժամկետում խորհուրդն արտահերթ ժողովի գումարման մասին որոշում չի ընդունում կամ որոշում է ընդունում դրա գումարումը մերժելու մասին, ապա արտահերթ ժողովը կարող են գումարել ժողովի գումարման մասին պահանջը ներկայացրած անձինք:

11) Օրենքով և ժողովի որոշմամբ սահմանված դեպքերում ընկերությունում ստեղծվում է հաշվիչ հանձնաժողով, որի կազմը չի կարող երեք հոգուց պակաս լինել: Հաշվիչ հանձնաժողովի անդամներ չեն կարող լինել Ընկերության խորհրդի անդամները, վերստուգողը, Ընկերության տնօրենը, ինչպես նաև այն անձինք, որոնք առաջադրված են այդ պաշտոնների թեկնածուներ:

12) Ընկերության բաժնետերը ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով (լիազորագրի առկայության դեպքում):

13) Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

14) Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է նոր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը: Նոր ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում:

Չկայացած ժողովի փոխարեն գումարվող նոր ժողովն իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին:

Ընկերությունում ստեղծվում է **խորհուրդ**, որն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Ընկերության կանոնադրությամբ վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը:

1) Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

ա) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների, ներառյալ՝ քաղաքականության որոշումը, ռազմավարական և տարեկան գործարար ծրագրերի ու բյուջեի, ներառյալ՝ դրանց ֆինանսական, մարկետինգային և արտադրական բաղկացուցիչ մասերի, դրանցում կատարվող փոփոխությունների, ինչպես նաև բյուջեով նախատեսված կապիտալ ծախսերի և գործառնական գործունեության 10%-ը գերազանցող գումարի տատանումների, խորհրդատվական ծառայությունների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հաստատումը:

բ) տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ Ընկերության կանոնադրության վերը նշված (10) կետով սահմանված դեպքերի:

- զ) բաժնետերերի ժողովների օրակարգի հաստատումը.
- դ) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համապատասխան.
- ե) Ընկերության բաժնետերերի ժողովի բացառիկ իրավասության ա), բ), գ), զ), ը), թ), ժ), ժգ), ժդ), ժզ) ժէ), ի), իա), իբ) և իգ) ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովի քննարկմանը.
- զ) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.
- է) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով և դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը.
- ը) Ընկերության վերստուգողի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.
- թ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատմանը վերաբերող առաջարկությունների ներկայացումը ժողովին և նրա վճարման չափի սահմանումը.
- ժ) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.
- ժա) Ընկերության բաժնետոմսերով վճարվող միջանկյալ շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.
- ժբ) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.
- ժե) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին այն փաստաթղթերի հաստատումը, որոնք վերապահված չեն բաժնետերերի ժողովի կամ գործադիր մարմնի իրավասությանը.
- ժզ) Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.
- ժզ) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում գործարքների կնքումը կամ հաստատումը, այդ թվում՝
- ✓ ցանկացած պայմանագրի, համաձայնության կամ ծախսերի կատարում ենթադրող գործարքի հաստատումը, որը դուրս է Ընկերության սովորական տնտեսական գործունեության շրջանակներից կամ գերազանցում է 200000 Եվրոյին համարժեք ՀՀ դրամի մեծությունը.
 - ✓ ցանկացած ակտիվի կամ ակտիվների օտարմանը հանգեցնող գործարքի (վաճառքի, վարձակալության կամ մմանատիպ այլ գործարքի միջոցով) հաստատումը, որի կամ որոնց հաշվեկշռային արժեքը գերազանցում է Ընկերության ակտիվների հինգ տոկոսը.
 - ✓ ցանկացած ոչ ընթացիկ ակտիվի վաճառքի հաստատումը, որի արժեքը գերազանցում է 50000 Եվրոյին համարժեք ՀՀ դրամի մեծությունը.
 - ✓ ցանկացած ակտիվի գրավադրման գործարքի հաստատումը.
 - ✓ փոխառության գումարների վաղաժամկետ վերադարձման, ինչպես նաև երաշխավորության կամ փոխառության պայմանագրերի, կամ որևէ պարտավորության գնման կամ այլ կերպ ձեռքբերման կամ պարտատարի ոչ վնասների՝ պայմանական կամ որևէ այլ հիմքով ապահովագրման գործարքների հաստատումը,
 - ✓ Ընկերության բյուջեի ընդհանուր գումարի տարեկան հինգ տոկոսից ավել շեղումների հաստատումը
 - ✓ Ընկերության խոհրդատուների, ներառյալ՝ բանկերի հաստատումը
- ժը) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.
- ժթ) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.
- ի) Ընկերության գործադիր տնօրենի, տեղակալների, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների նշանակումը կամ ազատումը, նրանց աշխատավարձի, աշխատանքային պայմանների, ներառյալ՝ նպատակային առաջադրանքների սահմանումը, Ընկերության աշխատակիցներին դրամական պարգևավճարների սահմանումը, ինչպես նաև Ընկերության հաստիքացուցակի հաստատումը,
- իա) շահագրգիռ գործարքների հաստատումը, որոնք դուրս են Ընկերության սովորական տնտեսական գործունեության շրջանակներից, ինչպես նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում շահագրգիռ այլ գործարքների հաստատումը,
- իբ) Ընկերության անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր վարող անձի հաստատումը կամ նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև պայմանագրի պայմանների որոշումը
- իգ) ներքին քաղաքականությունների հաստատումը
- իդ) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Ընկերության կանոնադրությամբ իր իրավասությանը վերապահված այլ հարցերի լուծումը:
- 2) Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան ժողովի կամ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում՝ արտահերթ ժողովի կողմից: Խորհրդի ընտրվող անդամների քանակական կազմը սահմանվում է 3 (երեք) հոգի:
- 3) Ընկերության այն բաժնետերերը, որոնք ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել խորհրդի կազմում կամ դրանում

նշանակել իրենց ներկայացուցչին: Յուրաքանչյուր բաժնետեր խորհրդում կարող է զբաղեցնել միայն մեկ տեղ: Խորհրդի կազմում ընտրված են համարվում ձայների առավելագույն քանակ ստացած թեկնածուները:

4) Խորհրդի նախագահին և նրա տեղակալին ընտրում են խորհրդի անդամները, խորհրդի անդամների կազմից: Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին և նրա տեղակալին կամ ընտրել նոր նախագահ և տեղակալ՝ խորհրդի անդամների միաձայնությամբ: Ընկերության խորհրդի նախագահի և տնօրենի պաշտոնները կարող են համատեղվել:

5) Խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս եռամսյակը մեկ անգամ՝ խորհրդի նախագահի նախաձեռնությամբ, խորհրդի անդամի, վերստուգողի, գործադիր մարմնի, Ընկերության աուդիտի իրականացնող անձի, ինչպես նաև քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին տիրապետող բաժնետերերի պահանջով՝ այդ մասին գրավոր ծանուցելով խորհրդի բոլոր անդամներին խորհրդի նիստի գումարման օրվանից առնվազն 14 օր առաջ: Խորհրդի նիստերը կարող են անցկացվել անդամների ֆիզիկական ներկայությամբ կամ հեռախոսով:

6) Եթե խորհրդի որևէ անդամ հրաժարվում է կամ անկարող է դառնում կատարել իր պարտականությունները, ապա Ընկերությունը պետք է խորհրդի նոր անդամ ընտրելու նպատակով արտահերթ ժողով գումարի, որի մասին որոշումը կայացնում է խորհուրդը:

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության միանձնյա գործադիր մարմինը՝ **գործադիր տնօրենը** (տնօրենը): Ընկերության տնօրենի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ ժողովի և խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերի: Խորհրդի կողմից Ընկերության տնօրենին նշանակելուց հետո, Ընկերությունը նրա հետ կնքում է պայմանագիր, որը Ընկերության ամունից ստորագրում է խորհրդի նախագահը:

1) Ընկերության գործադիր տնօրենը (տնօրենը)

ա) տնօրենում է Ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.

բ) առանց լիազորագրի գործում է Ընկերության անունից.

գ) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.

դ) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային.

ե) տալիս է լիազորագրեր.

զ) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.

է) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

ը) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

թ) օրենքով և Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին, ինչպես նաև աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

2) Ընկերության անվանմամբ կլոր կնիքը գտնվում է Ընկերության տնօրենի տիրապետման ներքո: Դրա օգտագործման իրավասությունը պատկանում է միայն տնօրենին:

3) Ընկերության տնօրենն իր պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործի ելնելով Ընկերության շահերից: Նա պատասխանատվություն է կրում իր գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառած վնասի համար:

Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է **վերստուգողը**, որին ընտրում է ժողովը: Վերստուգող կարող է լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված գործունակ ֆիզիկական անձը:

1) Վերստուգողը հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին, այլ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը: Նա իրավունք ունի իրականացնել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ, ժողովի կամ խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով: Ընդ որում, վերստուգողը սեփական նախաձեռնությամբ ստուգումներ կարող է իրականացնել տարեկան ոչ ավելի քան երկու անգամ: Վերստուգողը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Ընկերության կանոնադրությամբ և ժողովի կողմից հաստատված վերստուգողի կանոնակարգով:

2) Վերստուգողի պահանջով նրան պետք է տրամադրվեն Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:

3) Ընկերության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ վերստուգողի եզրակացությունը պարտադիր է:

4) Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով, բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, Ընկերությունը կարող է ներգրավել աուդիտորի:

բ. Տեղեկություններ թողարկողի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր անձի վերաբերյալ

Անուն ազգանուն	Բնակության վայրը (հասցեն)	մասնագիտությունը	վերջին 3 տարիներում զբաղեցրած պաշտոնները այդ թվում համատեղությամբ	Ընկերության հասարակ բաժնետոմսերի քանակը	
				հատ	տոկոս
Սամվել Բեգլարյան	Երևան, Քաջազունու 52, բն.12	տնտեսագետ	«Շեն-կոնցեռն» ՓԲԸ Տնօրենների Խորհրդի նախագահ	107813	71.88%
Արա Հասրաթյան	Երևան, Սայաթ-Նովա փ. 152, բն.51	տնտեսագետ	«Շեն-կոնցեռն» ՓԲԸ Տնօրենների Խորհրդի փոխնախագահ	41971	27.98%
Իրինա Դավթյան	Երևան, Նար-Դոս փ. 752, բն.58	բանասեր	08.09.2008-ից «Շեն-կոնցեռն» ՓԲԸ Տնօրենների Խորհրդի անդամ, 1989թ.-ից «Շեն-կոնցեռն» ՓԲԸ կադրերի բաժնի պետ,	-	-
Լիանա Հայրապետյան	Երևան, Անդրանիկի 282, բն.34	միջազգային տնտեսական կապերի մասնագետ	«Շեն-կոնցեռն» ՓԲԸ վերստուգող, հունքի հաշվառման բաժնի մասնագետ	-	-
Պապ Բադալյան	Երևան, Հ-Ա զանգ. Գ-3, 172, բն.12	տնտեսագետ	«Շեն-կոնցեռն» ՓԲԸ Գործադիր տնօրեն	39	0.03%
Արմեն Բալասանյան	Երևան, Բագրատունյաց 22 բն. 36	տնտեսագետ	03.2004-08.2005 «Բաքս» ՍՊԸ գլխավոր հաշվապահ 08.2005-ից առ այսօր «Շեն-կոնցեռն» ՓԲԸ Ֆինանսական տնօրեն - գլխավոր հաշվապահ	-	-

գ. Թողարկողի և թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց միջև շահերի բախման դեպքեր չեն եղել:

Թողարկողի հետ փոխկապակցված անձինք, թողարկողի սեփականատերերը

1. Թողարկողի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկություններ

ա. Ընկերության հետ փոխկապակցված անձինք համարվում են Սամվել Բեգլարյանը և Արա Հասրաթյանը, որոնք քվեարկելու իրավունքով ուղղակիորեն տիրապետում են Ընկերության բաժնային արժեթղթերի՝ համապատասխանաբար 71.88, և 27.98 տոկոսներին:

Սամվել Բեգլարյանը՝ անձնագիր AG0662804, հասցեն ք. Երևան, Քաջազունու 52, բն.12, վերջին երեք տարիների ընթացքում՝ այդ թվում համատեղությամբ, զբաղեցրել է «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի տնօրենների Խորհրդի նախագահի պաշտոնը, և տիրապետում է Ընկերության թողարկած 107813 հատ հասարակ անվանական բաժնետոմսի (71.88%):

Արա Հասրաթյանը՝ անձնագիր AG 0282833, հասցեն՝ ք.Երևան, Սայաթ-Նովա փ. 152, բն.51: Արա Հասրաթյանը վերջին երեք տարիներին զբաղեցրել է «Շեն-կոնցեռն» ՓԲԸ Տնօրենների Խորհրդի փոխնախագահի պաշտոնը, նրան պատկանում է Ընկերության թողարկած 47971 հատ հասարակ անվանական բաժնետոմսերը (27.98%):

բ. Ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական անձ են հանդիսանում «Շեն Ջեորջիա» ՍՊԸ-ն, որի 35% բաժնեմասը պատկանում է «Շեն-կոնցեռն» ՓԲԸ-ին: «Շեն Ջեորջիա» ՍՊԸ-ն գտնվում է Վրաստանի Հանրապետություն և զբաղվում է Շինարարական ապրանքների արտադրությամբ և շինարարությամբ:

2. Թողարկողի նշանակալից, բայց ոչ խոշոր սեփականատերերի վերաբերյալ

ա. Թողարկողի բաժնային արժեթղթերի նշանակալից սեփականատեր հանդիսացող ֆիզիկական անձինք չկան:

բ. Թողարկողի բաժնային արժեթղթերի նշանակալից սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձինք չկան:

Թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ

1) Ընկերություն մինչ այժմ թողարկել է սովորական անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսեր, սահմանափակ շրջանառության իրավունքով փոխարկելի, ոչ փաստաթղթային անվանական պարտատոմսեր, և անվանական ոչ փաստաթղթային դիսկոնտային պարտատոմսեր:

2) Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթերը՝

Ընկերության թողարկված բաժնետոմսերը չեն գրանցվել:

«Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի առաջին տրանշով (10000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 4000 հատ, 365 օր մարման ժամկետով) տեղաբաշխված զեղչատոկոսային պարտատոմսերը 2007 թվականի փետրվարին գրանցվել են Հայաստանի Ֆոնդային Բորսա ԲԲԸ-ում (հասցե՝ ՀՀ ք. Երևան, Մեծ Սկրտչյան 5բ, հեռ: (+37410) 543324, (+37410) 543321), որոնց շնորհիվ էլ AMSHNCB01ER4 ծածկագիրը: Առաջին տրանշի պարտատոմսերը ցուցակվել են Բորսային ստորին (Bbond) մակարդակում և շնորհիվ էլ SHNCB1 բորսայական հապավումը: Այս պարտատոմսերը մարվել են 26.12.2007թ.-ին:

«Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի երկրորդ տրանշով (10000 դրամ անվանական արժեքով, 4000 հատ, 365 օր մարման ժամկետով) տեղաբաշխված զեղչատոկոսային պարտատոմսերը 2007 թվականի հունիսին գրանցվել են Հայաստանի Ֆոնդային Բորսա ԲԲԸ-ում (հասցե՝ ՀՀ ք. Երևան, Մեծ Սկրտչյան 5բ, հեռ: (+37410) 543324, (+37410) 543321), որոնց շնորհիվ էլ AMSHNCB02ER2 ծածկագիրը: Երկրորդ տրանշի պարտատոմսերը ցուցակվել են Բորսային ստորին (Bbond) մակարդակում և շնորհիվ էլ SHNCB2 բորսայական հապավումը: Այս պարտատոմսերը մարվել են 25.04.2008թ.-ին:

«Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի երրորդ տրանշով (10000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 8000 հատ, 365 օր մարման ժամկետով) տեղաբաշխված զեղչատոկոսային պարտատոմսերը 2007 թվականի հոկտեմբերին գրանցվել են Հայաստանի Ֆոնդային Բորսա ԲԲԸ-ում (հասցե՝ ՀՀ ք. Երևան, Մեծ Սկրտչյան 5բ, հեռ: (+37410) 543324, (+37410) 543321), որոնց շնորհիվ էլ AMSHNCB03ER0 ծածկագիրը: Երրորդ տրանշի պարտատոմսերը ցուցակվել են Բորսային ստորին (Bbond) մակարդակում և շնորհիվ էլ SHNCB3 բորսայական հապավումը: Այս պարտատոմսերը մարվել են 02.09.2008թ.-ին:

3) Թողարկված արժեթղթերի ընդհանուր ծավալը և քանակը

1999թ. հոկտեմբերին «Շեն Կոնցեռն» ՓԲԸ-ի կողմից թողարկված 6071 հատ սահմանափակ շրջանառության իրավունքով փոխարկելի պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմում է 303.550.000 ՀՀ դրամ:

2004թ. դեկտեմբերին «Շեն Կոնցեռն» ՓԲԸ-ի կողմից թողարկված 55146 հատ լրացուցիչ բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 551.460.000 ՀՀ դրամ, որոնցից տեղաբաշխվել են 55000 հատ բաժնետոմս, 550 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով:

«Շեն Կոնցեռն» ՓԲԸ-ի կողմից թողարկված 16000 հատ զեղչատոկոսային պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմում է 160.000.000 ՀՀ դրամ, որը տեղաբաշխվել է երեք տրանշներով, ընդ որում՝

- 2007 թ. փետրվարին առաջին տրանշով տեղաբաշխված 4000 հատ զեղչատոկոսային պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմում է 40 մլն ՀՀ դրամ,
- 2007 թ. փետրվարին երկրորդ տրանշով տեղաբաշխված 4000 հատ զեղչատոկոսային պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմում է 40 մլն ՀՀ դրամ,
- 2007 թ. փետրվարին երրորդ տրանշով տեղաբաշխված 8000 հատ զեղչատոկոսային պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմում է 80 մլն ՀՀ դրամ:

4) Ընկերության կողմից թողարկված բաժնետոմսերի համար մարմում չի նախատեսվում, իսկ նախկինում թողարկված 16000 հատ պարտատոմսերի մարման ժամկետները եղել են՝

- 1-ին տրանշ՝ 26.12.2007թ.
- 2-րդ տրանշ՝ 25.04.2008թ.
- 3-րդ տրանշ՝ 02.09.2008թ.

5) Արժեթղթերի սեփականատերերի հիմնական իրավունքները և պարտականությունները

Ընկերության յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքներ: Սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերը օրենքի և Ընկերության կանոնադրության համաձայն իրավունք ունի՝

ա) մասնակցել ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.

բ) մասնակցել Ընկերության կառավարմանը.

գ) ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից.

- դ) առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը.
- ե) ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն (գաղտնի փաստաթղթերից բացի), այդ թվում, Ընկերությանը դիմելուց հետո 5-օրյա ժամկետում ստանալ տեղեկություններ, որոնք վերաբերում են հաշվապահական հաշվեկշռին, հաշվետվություններին և Ընկերության արտադրատեսակական գործունեությանը.
- զ) ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.
- է) հանդես գալ առաջարկություններով ժողովում.
- ը) ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.
- թ) դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.
- ժ) Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իր հասանելիք մասը.
- ժա) Ընկերության միջոցների հաշվին Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակությամբ բաժնետոմսեր.
- ժբ) ունենալ կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

Սույն կետում դիտարկվել է միայն բաժնետոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքներն ու պարտականությունները, քանի որ անվանական զեղչատոկոսային պարտատոմսեր արդեն մարվել են, և սեփականատերեր չունեն:

6) ա) Չնայած ընկերության բաժնետոմսերը թույլատրված չեն որևէ կարգավորվող շուկայում այնուամենայնիվ նշենք, որ

2006 թվականի համար շահաբաժիններ հայտարարվել է 70.0 մլն դրամի, որը վճարվելու է 2007թ-ի 3-րդ եռամսյակի ընթացքում:

2007 թվականի համար ընկերությունը հայտարարվել է 450.0 մլն դրամի շահաբաժիններ, որը վճարվելու է 2008թ-ի հունիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը: 30.06.2008թ.-ի դրությամբ վճարվել է 175 մլն ՀՀ դրամ շահաբաժին:

Նախկինում թողարկված պարտատոմսերի սեփականատերերին պարտատոմսերի դիմաց վճարվել է միայն անվանական արժեքը, քանի որ այն վաճառվել է անվանական արժեքից ցածր գնով (դիսկոնտ): Եկամտի չափը հավասար է եղել անվանական արժեքի և ձեռք բերման գնի տարբերությանը:

բ) Ընկերությունը ընթացիկ տարում շահաբաժինների միջանկյալ վճարումներ չի իրականացրել:

7) Արժեթղթերի փոխարկման, բաժանման, համախմբման, ձեռքբերման, հետգնման դեպքերի, պատճառների, ժամկետների և արդյունքների վերաբերյալ տեղեկություններ

«Շեն-կոնցեռն» բաց բաժնետիրական Ընկերության թողարկած 64645 հատ սովորական անվանական բաժնետոմսերը՝ յուրաքանչյուրը 10000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 1999 թվականի հոկտեմբերի 28-ին, Ընկերության վերակազմավորման պատճառով՝ ըստ հաստատված կարգի փոխարկվել են «Շեն-կոնցեռն» փակ բաժնետիրական Ընկերության 64645 հատ սովորական անվանական բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 10000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

Ընկերության թողարկած 6071 հատ փոխարկելի պարտատոմսերը՝ յուրաքանչյուրը 50000 դրամ անվանական արժեքով, 28.10.99թ-ից 15.12.99թ.-ի ընթացքում, ըստ հաստատված կարգի փոխարկվել են Ընկերության սովորական, անվանական բաժնետոմսերով՝ 1 հատ պարտատոմսը 5 հատ սովորական անվանական բաժնետոմս համամասնությամբ: Փոխարկման արդյունքում Ընկերության կանոնադրական կապիտալը աճել է 303550000 ՀՀ դրամով (6071*50000), և կազմել է 950000000 ՀՀ դրամ (646450000+303550000):

«Շեն Կոնցեռն» ՓԲԸ-ն համաձայն անվանական ոչ փաստաթղթային զեղչատոկոսային պարտատոմսերի թողարկման տեղաբաշխման և մարման կարգի մարել է 160.000.000 ՀՀ դրամ ընդհանուր ծավալով պարտատոմսերը՝ համապատասխանաբար.

- առաջին տրանշի պարտատոմսերի մարումը տեղի է ունեցել 2007թ. դեկտեմբերի 26-ին,
- երկրորդ տրանշի պարտատոմսերի մարումը՝ 2008թ. ապրիլի 25-ին,
- երրորդ տրանշի պարտատոմսերի մարումը՝ 2008թ. սեպտեմբերի 2-ին:

Պարտատոմսերի մարման արդյունքում պարտատոմսերի սեփականատերերին վճարվել է դրանց անվանական արժեքը և ընկերության պարտավորությունները նվազել են համապատասխան չափով:

Թողարկված արժեթղթերի փոխարկման, բաժանման, համախմբման, ձեռքբերման, հետգնման և (կամ) մարման այլ դեպքեր չեն եղել:

Հաստատված է ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության
12.12.2001թ. թիվ 465 հրամանով տարեկան (ամբողջական
փաթեթով միջանկյալ) հաշվետվության ներկայացման համար

Տարածվում է ՀՀ կառավարության 26.11.1998թ. N 740 որոշմամբ
սահմանված կազմակերպությունների վրա

Գեկավար
կ.տ

Պապ Բաղդյան
անուն ազգանուն

Ձև N 1

Գլխավոր հաշվապահ

Արմեն Բալասանյան
անուն ազգանուն

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

առ

31 դեկտեմբերի 2005թ.
(ամսաթիվ, ամիս, տարի)

ծածկագիրը

Կազմակերպության անվանումը	«Շեն-Կոնցեռն» փակ բաժնետիրական ընկերություն	01894137
Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները	Մանրածախ և մեծածախ առևտուր շինանյութերի արտադրություն	24113 5143
Պետական ռեզիստրում գրանցման համարը		269.130.01032
Հարկ վճարողի հաշվառման համարը		02201344
Չափի միավորը		հազ. դրամ
Գտնվելու վայրը	ք. Երևան, Շիրակի 2/2	հեռախոսը 46-01-01

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	010	1 649 675	2 144 927
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	020	6 114	149 239
Ոչ նյութական ակտիվներ	030	1 328	1 062
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	040		
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	050		
Հետաձգված հարկային ակտիվներ	060		
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	070	20 818	30 485
	071		
	072		
	073		
	074		
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	1 677 935	2 325 713
II. Ընթացիկ ակտիվներ			
Նյութեր	090	226 740	250 741
Աճեցվող և բուծող կենդանիներ	100		
Արագամաշ առարկաներ	110	22	30 045
Անավարտ արտադրություն	120		406
Արտադրանք	130	45 453	55 314
Ապրանքներ	140	236 768	209 877
Տրված ընթացիկ կանխավճարներ	150	7 794	54 257
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	160	214 795	148 326
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170	3 719	9 561
Այլ դեբիտորական պարտքեր	180	1 083	1 590
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	190		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	200	5 610	930
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	210	8 087	17 463
	211		
	212		
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	750 071	778 510
Հ Ա Շ Վ Ե Կ Ը Ի Ռ	230	2 428 006	3 104 223

ՊԱՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի գուտ գումար	240	950 000	1 500 000
Էմիսիոն եկամուտ	250		225 167
Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ	260	544 851	530 781
Կուտակված շահույթ	270	201 010	125 539
Պահուստային կապիտալ	280	20 000	142 500
Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում՝	290		
	291		
Ընդամենը սեփական կապիտալ	300	1 715 861	2 523 987
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	310	117 699	144 147
Հետաձգված հարկային պարտավորություններ	320	136 213	136 213
Ակտիվներին վերաբերող շնորհներ	330		
Ոչ ընթացիկ պահուստներ	340		
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	350		
	351		
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	360	253 912	280 360
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ բանկային վարկեր	370	227 180	132 940
Կարճաժամկետ փոխառություններ	380		
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	390	190 936	128 449
Ստացված ընթացիկ կանխավճարներ	400	21 540	11 441
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	14 941	4 809
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	420	644	1 283
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	430	2 928	19 470
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին (հիմնադիրներին)	440	54	4
Այլ կրեդիտորական պարտքեր	450	10	1 480
Եկամուտներին վերաբերող շնորհներ	460		
Ընթացիկ պահուստներ	470		
Այլ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	480		
	481		
	482		
	483		
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	458 233	299 876
Հ Ա Շ Վ Ե Կ Ը Ի Ռ	500	2 428 006	3 104 223

Հաստատված է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության
12.12.2001թ. թիվ 465 հրամանով տարեկան (ամբողջական
փաթեթով միջանկյալ) հաշվետվության ներկայացման համար

Տարածվում է ՀՀ կառավարության 26.11.1998թ. N 740 որոշմամբ
սահմանված կազմակերպությունների վրա

Ձև N 2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Տարի 2005թ.
(հաշվետու տարին (ժամանակաշրջանը))

		ծածկագիրը
Կազմակերպության անվանումը	«Շեն-Կոնցեռն» փակ բաժնետիրական ընկերություն	01894137
Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները	Մանրածախ և մեծածախ առևտուր շինանյութերի արտադրություն	24113 5143
Պետական ռեգիստրում գրանցման համարը		269.130.01032
Հարկ վճարողի հաշվառման համարը		2201344
Չափի միավորը		հազ. դրամ
Գ-տնվելու վայրը	<u>ք. Երևան, Շիրակի 2/2</u>	հեռախոսը 46-01-01
Փաստացի գործունեության իրականացման վայրը	<u>ք. Երևան, Շիրակի 2/2</u>	հեռախոսը 46-01-01,46-35-29

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան 'աճողական)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան 'աճողական)	Նախորդ տարվա միջանկյալ ժամանակաշրջան	Հաշվետու տարվա միջանկյալ ժամանակաշրջան
1	2	3	4	5	6
